Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99-192
Li-84

784.4
47-37

ՁԱՅՆԱԳՐԵԱԼ

# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

## ՀԱՅ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԺՈՂՈՎԵՑ ԵՒ ՁԱՅՆԱԳՐԵՑ

ԵԶՆԻԿ ՔԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԻՍԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ - ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ, ՀԱՅՈՑ ՏՓԽԻՍՈՒ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՅԼԱ — 1882

ՀՐԱՄԱՆԱՒ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

552-2008

# ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Յայտնի է, որ երգեցողութիւնը արդի մանկավարժական կրթող և դաստիարակող ուսուցման ամենազօրաւոր միջոցներից մին է։ Հոգեբանական հետազօտութիւնները ապացուցանում են, որ մարդուս ամեն ընդունակութիւններից առաջ զարգանում և կատարելագործվում են զգացումները, որոնք և կազմում են երգեցողութեան սկզբնական տարրը։ Այդ սկզբնածին զգացումները զարգացուցանող ուսուցման միջնորդութեամբ կատարելագործվում հասնում են ամենաբարձր իմացական, ճաշակագիտական, բարոյական և կրօնական նուրբ և ազնիւ զգացմանց. սոցա կատարելագործուելովը մարդուս հոգւոյ մէջ ծագում են աստուածպաշտութեան, ազգասիրութեան, եղբայրսիրութեան, ընկերսիրութեան և երախտագիտութեան մարդավայել արժանաւորութիւնները։ Ակնյայտնի է, ուրեմն, որ այս կերպ դաստիարակութեամբ միայն կարող են կազմակերպուիլ մարդուս մէջ բարոյական բնաւորութեան և առաքինասիրութեան սրբազան սկզբունքները, որոց կազմակերպող տարրերը գտնվում են մայրենի լեզուի, կրօնի, ազգային պատմութեան և բանաստեղծութեան ուսուցմանց մէջ. ուրեմն երգեցողութիւնը, որ իւր սկիզբն առնում է վերոյիշեալ առարկաներից, մանաւանդ վերջինից (որովհետև բանաստեղծութիւնը երգ է ծնում)—անշուշտ պէտքէ ամուր շաղկապուած լինի միւս առարկաների դասատուութեանց հետ և համաձայն մանկավարժական ներկայ պահանջման նոցա հետ համընթաց կերպով կապակցուած ուսուցանուի և յառաջ ընթանայ, որովհետև երգը և գիտութիւնը պէտքէ միմեանց այնպէս յաջորդեն, ինչպէս որ սիրտը և միտքը միմեանցից անբաժան են։

Այսպէս երգեցողութեան զուգընթացաբար ուսուցումն լեզուի կրօնի, պատմութեան և մինչև անգամ բնագիտութեան հետ ունի, այն առաւելութիւնը, որ կարողանումէ մեծ տպաւորութիւն թողնել մանկանց փափուկ սրտերի վերայ և յառաջ բերել նոցա հոգւոյ մէջ խրախուսող զգացումներ։ Խմբովին երգեցողութիւնը կապումէ նոցա սրտերը և զօրացնում միութեան զգացմունքը։ Որքան օգտաւէտ կլինէր, եթէ կրօնի դասի ժամանակ երգուէր մի հոգևոր երգ կամ շարական. լեզուի, ընթերցանութեան դասին՝ մի ոտանաւոր, հայրենասիրութեան դասին՝ մի հայրենասէրական երգ և բնագիտութեան դասին՝ բնութեան Արարիչը փառաբանող մի երգ։ Այսպիսի երգերի մէջ էլ պէտքէ լաւ ընտրութիւններ անել՝ և աշխատել որ ճշմարիտ բանաստեղծօրէն յօրինուած երգերը դառնան երգեցողութեան հիմքը։

Սակայն ցաւելով պէտքէ ասել, որ մեզանում այս՝ առարկայի դասատուութիւնը ընդհակառակն է, բացի այս գտնվումեն մեր մէջ դեռ շատերը, որոնք երգ ասելով հասկանումեն միմիայն հոգևոր երգերը կամ շարականները և կարծումեն, թէ երգը միայն հոգևորականներին է պատշաճ։ Հէնց այս մտքով էլ երգեցողութիւնը համարվումէ մեր մէջ մի աննշան առարկայ և ուսման գործի մէջ փոխանակ իւր պատշաճաւոր տեղը բռնելու, երկրորդական և երրորդական տեղն է դասուել։ Ուրեմն կարելի է ասել, որ մեզանում այս առարկայի վսեմ նշանակութիւնը չէ հասկացուած ու գնահատուած։ Ես երգեցողութեան այս վիճակի մէջ մնալու պատճառներից մին համարումեմ այն, որ մինչև ցարդ չունենք մի յարմարաւոր ժողովածու ազգային, դպրոցական երգերի համար. ուստի ձեռք զարկեցի ժողովել դպրոցի շրջանին վերաբերեալ մեր ազգային երգերը և ընտրութեամբ ի լոյս ընծայել, իբրև ձեռնարկ մեր գլխաւորապէս միջնակարգ ուսումնարանների համար։

Երկու խօսք էլ ասենք «Ձայնագրեալ ազգային երգարանի» կազմութեան մասին։

Մեր ազգային երգերը, իրանց եղանակների վերաբերութեամբ, շատ խառն դրութեան մէջ են. նոցա եղանակները ձայնագրութեամբ չգրուած լինելով և ամբոխի բերանում երգուելով աղաւաղուել են և ստացել զանազան փոփոխութիւններ, մինչև անգամ փոխուել են ուրիշ եղանակի։ Երգերի այս խառն վիճակն էր, որմէ ստիպուած դիմեցի թէ լրագրութեան միջոցով և թէ առանձինն մեր ձայնագրագէտ ուսուցիչներին և երգերի եղանակների մեծ. հեղինակներին՝ խնդրելով օգնել ինձ այս գործում. սակայն պէտքէ նկատել, որ այդ պարոնները՝ բացառութեամբ մի քանիսի՝ անտարբեր գտնուեցան դէպի մեր հրաւէրը, որի պատճառաւ մինչև ցարդ ուշացաւ երգարանիս տպագրութիւնը։ Ես դրանով չվհատեցայ, այլ կարելին եղած միջոցները ի գործ դնելով բաւականին ազգային երգեր ժողովեցի, որոց մեծ մասը ունին եղանակներ եւրոպական ձայնագրութեամբ տպագրուած. սոցա եղանակների մասին կասկածելու ոչինչ առիթ չկայ, որովհետև նոքա նոյն իսկ հեղինակների եղանակներն են. բայց այդ երգերի մի մասի եղանակների ճշտութեան մասին ես նոյնը չեմ ասել, որովհետև այդ երգերը Տաճկաստանի երգեր են և ինձ ուղարկել են Ռուսաստանի հայ դպրոցների ձայնագրութեան ուսուցիչները, և անկարելի է որ մինչև նոցա հասնելը, փոքր ինչ փոփոխութիւնների չենթարկուէին։ Ես այդ երգերի եղանակները, ինչպէս ինձ հասել է, նոյնութեամբ գրել եմ։ Մի քանի երգերի եղանակները, թէև եւրոպական ձայնագրութեամբ ստացայ, բայց տեսնելով որ ներկայ ժողովրդի երգած եղանակը աւելի քաղցր և համեղ է, ես այն թողած՝ ժողովրդի երգածն եմ գրել ու մուծել երգարանիս մէջ։ Մի քանի երգեր էլ, ինչպէս երևաց ինձ ուղարկված երգերից՝ ունեցել են մի քանի եղանակներ, ես նոցանից ընտրել եմ այն եղանակը, որը աւելի համեղ և քաղցր է եղել։ Ես առհասարակ երգերի գրութիւնները աշխատել եմ այնպիսի ձայնանիշներից սկսել, որ մարդկային ձայնը հեշտութեամբ կարող լինի հասնել։ Մի քանի երգեր էլ թողել եմ, ուղարկողի խնդրանաց համաձայն այնպէս բարձր ձայնանիշներով գրած, ինչպէս ինքը գրել է. հարկաւ նոցա երգելու ժամանակ պէտքէ ցածր ձայներով և տեղափոխուած էջ-ել երգել։ Երգերի բանաստեղծութիւնները ես վերցրել եմ արդէն հրատարակեալ երգարաններից, իսկ այն երգերինը, որոնք տպագրուած չեն, կամ թէ չէ ընկել մեր ձեռքը, նոքա նոյնութեամբ գրել եմ, ինչպէս ուղարկել են։ Բոլոր եղանակների

-րութիւնները ընդունել եմ այն սկզբունքով, որ Հայկական ձօն,
-ւրոպական տօն է։

Վերջապէս բոլոր դժուարութիւնների առաջն առնելով կարո-
ղացայ կազմել այս երգարանը և յուսով եմ, որ կարող է օգտա-
-կէտ լինել մեր դպրոցների համար։

ԵԶՆԻԿ ԹԱՀԱՆԱՅ ԵՐԶՆԿԵԱՆՑ։

---

# 1.

## ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ.

3/4 — Չափաւոր.




Հեռանում եմ անգին ընկեր,
Զ'գնահատած ոչ ոքից,
Բայց հաւատեաւ անձնանուէր
Ազգիս մշակ կը հաշուիմ:
Ազնիւ ընկեր չը մոռանաս
Անդաւաճան ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ Հայրենիք—
Գնա եւ դու նոյն շաւղով:
Խեղճութիւնը Հայոց ազգի
Կարեկցաբար մտածիր.
Ոսկէ գրքոյկն Ծղիշէի
Քաջ առաջնորդ քեզ ընտրէք:

Այնտեղ սուրբ կրօն ազգ միաբան
Ազատ կամքով ու խղճով,
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան
Իւր խնկելի քաջերով:
Հայրենիք—սեղան սրբութեան—
Ես Աստուծոյ առաջեւ,
Շատ կաղաչեմ, շատ կարտասուեմ
Որ ծագէ քեզ նոր արեւ:
Իմ մահերիմ մահս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով.
Որովհետեւ խիղճս արդար է,
Ճշմարտութեա̄ն ջատագով:

Ս. Շահազիզեան:

---

2.

ՈՂԲԱԼԻ ԲԱՆՔ.

2/4 — Չափաւոր.




Կըսես քիչ է, թո՛ղ մնայ՝ լայ,
Ա՜խ, երբ լսեմ՝ մի՛ լայ, մի՛ լայ,
Շատ ցաւերով կայրիմ տապիմ,



Զունիմ մէկ մարդ հաւատարիմ.
Որ խղճալոյս գայ մօտենայ,
Հէչ չի ըսէ մի՛ լայ մի լայ:
Ա՜խ Հայ տղայ, խղճա՛ ինձի,
Տե՛ս թէ քո Անին ինչպէս է.
Հերիք ես լամ, դու չը գթաս.
Զէ՞ քո Անին ափսոս է:
Ախ ու վախով օրերս անցաւ.
Լալէն աչքերս կուրացաւ.
Որբ մնալն ինձ վիճակեցաւ,
Բաղդս ընաւ գլխ մոռացաւ:
Կորուցեր եմ թագաւորներ,
Գլխուս ժողվեր եմ քէօռ բուեր.
Որք միշտ կերգեն Անին անցա̄ւ,
Անին անտէր աւերեցաւ:
Անին եմ շատ մարդաբնակ,
Մնացեր եմ դառն աւերակ.
Իմ լաց իմ կոծ իմ աղաղակ,
Անտեր որբերու նմանակ:
Երբեմն էի շատ աննման,
Հայոց քաղաք Արեւելեան.
Աւերեր եմ սեփա յատակ,
Նստեր կուլամ ես միայնակ:
Եկար տեսար, դարձեր կերթաս.
Լալով կըսես «բարեաւ մնաս»
Աստուած սիրես չմոռանաս,
Մասիս սարին երբ մօտենաս:
Ըսես իմ քաջ Արարատին,
«Նստեր կուլայ քո խեղճ Անին»

Կըսէ, ե՞րբ աւետիք կըտաս,
Թէ՝ «իմ Անի, հերիք է լաս:»

Ե. Վ. Երարատեան:

---

3.

## ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ.
## 1861 Թ. ՄԱՅԻՍԻ 24.

4/4 — Չափաւոր.

Ա րեք Հայ կա ղունք յա ռաջըն թա նանք,
սահմա նադրու թեան նորբա բեւմ՚ալ տանք,
նորբա բեւմ՚ալ տանք, որ ազգներբ զանի փրկա բար կո չեց,
նորհո գինոր կեանք անոր պարգե ւեց: Ն կէք բարե կամք
առբարձ բեայնԱստ ուած ուղ ղենք մերմաղ թանք
սուրբսըր տէրըղ խած. ուղ ղենք մերմաղ թանք
սուրբսըր տէրըղ խած. կեց ցէ, կեց ցէ, կեց -



ցէ միշտ ազգնու սահմա նադրու թիւն: կեց -
ցէ, կեց ցէ, կեց ցէ միշտ ազգնու սահմա նադրու թիւն:

Զրկանք բռնութիւն վատթար վարչութեան,
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան,
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց,
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց:
Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամեն վայրկեան գոչել պարտ է մեզ:
Կեցցէ, կեցցէ եւայլն:
Դու ալ Հայաստան, սիրուն Հայրենիք,
Ալ այսուհետեւ մի՛ սգար լռիկ,
Զի ալ քու որդիք նոր հոգւով բերկրեալ,
Զքեզ հարս կուզեն տեսնել զարդարեալ:
Ալ մի՛ լար մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնիւ քաղցրիկ որդւոցդ հետ երգէ,
Կեցցէ. կեցցէ եւայլն:
Հայեր, միանանք մեր մօրն հետ, օրհնենք
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք,
Սահմանադրութեան բարեաց փոխանակ
Թող վարեն ուրախ կեանք մի փառունակ:
Թող եւ մեր որդիք հետ անոնց անուան,
Բիւրաւոր տարի օրհնեն ու կարդան:
Կեցցէ, կեցցէ եւայլն:

Յ. Գ. Սրվաճեան:

## 4.

### ՄՈՒՍԱ։

4/4 — Մեղմով.









Նիկողայոս Մելքոնեան։

## 5.

### ՆԿԱՐԻՉ.

3/4 — Մեղմ.




Շուռ տուր աչերդ, նայէ դէս ու դէն,
Տե՛ս քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.
Զարթի՛ր, սիրելի, այդ անուշ քընէն.
Գոնէ մի անգամ հանէ քո ոխը:
Բայց դու ներում ես նոյն վեհ հոգւով
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին . . . .
Ցանկարծ աչերդ փայլեց սուրբ շնորհքով,
Հրեղէն սիրտդ թնդաց խիստ ուժգին:
Առի՛ր վրձինդ, թաց արի՛ր ներկով,
Շունչ տուի՛ր անշունչ կըտաւին,
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին:
Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն
Տըւի՛ր պատկերին մատիդ շարժուածքով,



Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով:
Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց.
Ծնկաչոք զմուռս ու հալուէ խնկեց,
Գոչեց մեծաձայն «Դա է իմ Աստուած»:
Բայց ա՛խ, քու անքուն ժամերի ճիգը
Քանի մի արծաթ հազիւ գին դրին.
Ստեղծողդ դարձար քո խեղճ խըրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քո պատկերին:

Ռ. Տ—Գ. Պատկանեան:

## 6.

### ՍԱՅԼՈՐԴ.

2/4 — Չափաւոր.




Արթուն Սայլորդս գիշուայ դէմ
Իւր վիճակի վերայ ախրեց.

Եւ սիրելւոյն աչաց կարօտը
Նա տխրագին ձայնով երգեց:
«Մնաս բարեաւ իմ տուն հօրական,
Մնաս բարեաւ իմ սիրական,
Ես կհանգչիմ՝ զինչ բոց կրակին
Այս անբնակ դաշտի միջին:»
Այս որ ասաց՝ շարժեց մտրակը
Երեք ձիանց մէջքին խփեց
Իւր սիրելւոյն պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց:

Ռ. Տ—Գ. Պատկանեան:

---

## 7.

### ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ.

2/4 — Չափաւոր.

Ա հա բա ժակ ու րախու թեան, ի
սէր յա ւէրժ միու թեան, իսէր յաւէրժ միու թեան:
Զի վա յելուչ որդիք Հայկեան մէկտեղ հըրճուելն
եւցըն ծան: Կեցցէ սէրեւ միու թիւն կը-րեմք մի
սիրտմի արիւն, կեցցէ սէրեւ միու թիւն կըրեմք միսիրտ



մի ա րիւն: Վեր ցուրաչ քըղ յերկ նիցկա մար
փայ լիհե ռուստ աստղ միպայ ծառ. եւ դու՛ն,
հայ զար թիրսիրտ ա՛ռ, հա յոց բա ղ դըն ա լ
չէխա ւար:
* Կեցցէ յաւէրժ միու թիւն կըրեմք միսիրտ
մի արիւն, կեցցէ սէրեւ միու թիւն * կըրեմքմիսիրտ
մի ա րիւն կըրեմք միսիրտ մի ա րիւն:

Բա՜ւ է այսչափ բաժանումն,
Ըլլամք ուրախ եւ խնդում.
Նախանձ, վրէժ, ձեզ թողում,
Անդունդ.ք եւ վիհ.ք անհատնում:
Կեցցէ սէր եւ միութիւն
Կրեմք մի սիրտ մի արիւն:
Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ՚ ալ ընենք միութեան,
Լեցուի փափաքդ Հայաստան
Տես, որդիք քո միանան: Կեցցէ եւայլն:

Ինչ եւ ընեմք, ինչ կերպ առնեմք,
Ո՞ չը գիտաց, թէ մեք Հայ եմք.
Ո՞վ չգիտեր, թէ եղբայր եմք
Արէք ծիծաղ գիմօք երգեմք Կեցցէ եւայլն:
Ո՞ր բռնաւոր, մ'որ օրէնքներ,
Կը պատուիրեն թէ մ՛ սիրեր
Ազգիդ օգուտն ու բարիքներ.
Սիրոյ գաշն է յերկինս ի վեր:
Կեցցէ սէր եւայլն:

---

8.

### Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ.

$^2/_4$ — Մեղմ.

Ա Հա Հրեշ տա կ ոսկէ փետուր թռու ցեալ
բար ձուստ երկնա ճեմՀա վ՞ ցըաղ գի ն
Հեծեալ ի կառս՝ բար ձ՛ր գո չէ զուարթա դէմ.
տրալալա լամ, Հը վօր պատգամ, տրալալա լամ,



ի վերուստ գամ. միութիւն Հայք, տրալալա լամ
ենորհեղ կեանք:

$^4/_4$

Տրո փին ուժ գին ե ւ լանջքեւ սիրտ, խա ղայ ա րին
ի թինդի թինդ, մե ղըր կա թէ սուրբ սէրնի խինդ,
Ցա ռաքի նւոյն ի Հայոց սիրտ: Սի րոբոր բոց
Համ բոյրբըղ խեն, ար տասուա թոր աչ կունք ցօղեն:

$^2/_4$ — Յ..ր.ե..ր.

Ցա ռա քին ւոյն ի Հայոց սիրտ: Ա ըլքՀայ-
կա զունք ի սէրխու թաս ցուք, ե ռանդուն
մա տիք ի Համբոյր Հե զիկ: Տուք Համբոյր
մի եւս սիրոյ էպար գեւս. կեցցեն յաւերժ
վեՀ Հայ կազունք անմահ Հուլթեան սիրուն սերունդք,




Անկաւ պարիսպ ժանտ Նախանձուն ո՛չ ի շանթից ահարկու,
Այլ յականարկի եւ եթ սիրոյ վերաստացեալ կենսատու,
Երկին երկիր,
Կան ի յակճիռ,
Ընդ Հայ ազգիս,
Բիւր Հրաշալիս:
Բացցին անդունդք սեաւ անյատակ,
Ծածկել զբաղդին հին յիշատակ,
Տիեզերաց բացցին մատեանք,
Անդէն դրոշմել Հայոց պարծանք:
Կեցցէ Հայոց սէր պանծալի,
Բերող փառաց Նախանձելի:
Արի՛ք Հայկազունք,
Ի սէր փութասցուք, եւայլն:

Գ. Ապտուլլահ.

---



9.

ԵՐԳ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ.

2/4 — Չափաւոր.




Ծաղկունքն գարնան,
Սոխակն աննըման,
Զայնիւ ցնծալով,
Եղանակ բառնան: Արի՛ գովելի եւ այլն:
Զայնիւ երգեսցո՛ւք,
Սիրով գոչեսցուք,
Եւ ի դէմ վարդին
Մի՛շտ ոստոստեսցուք: Արի՛ գովելի եւ այլն:
Եւ մեք երգեսցուք,
Սիրով գոչեսցուք,
Եւ ի ժամ գարնան,
Մի՛շտ փառս տացուք: Արի՛ գովելի եւայլն:
Ահա ցնծասցուք,
Ի պարտէզ հասցուք,

Դու միշտ ցանկալի,
Ե՛կ ուրախասցուք:
Արի՛ գովելի գովելի մի լի,
Արի՛ գովելի գովելի մի լի:

---

## 10.

### «ՑԱՌԱՋ» ԶՕՐԱՑ ՀԱՅՈՑ։

$^4/_4$ — Զափաւոր.

Ա հա մեզ փառք ձեռք ձր գե լու ժամա նակհայ-
կայոր դլք Մը խիլթա րեան գուբա նա -
կ պողպա տիկ տէգ սայրա սուր եւնի զակք
առնեմք նետեմք ժանտթըշ նամին ոտքի տակ :
Լուծկըս պառ նայ ազատ հա յուն եւա րի,
մենքջարդն ու լուծ իրեն տամք թա՛ղ շուա -
րի, մըխեմք իւր սիրտ մերաշ տէն վիթխա րի



թո զ յուսա հատ յեր կիր դառ նայ պատկա ռի :
Խումբխումբ գուան որոտ ընդոստ վերա նին. թընդան
դաշտեր լերինք թընդան տատա նին, շանթիք շանթիք
մերնի զակաց խուժա նին, եւզէն ոսկիք խորան
թողուն եւ փախ չի ն, շանթիք շանթիք մերնի -
զակաց խուժա նին, եւզէն ոսկիք խորան թողուն
եւ փախ չին:

1001
886
28759
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Мясникяна
Մ. ՅԱՍ.․․ ՅԱՆ ԱՆ...
1001

---

## 11.

### ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԵՐԳ.

$^2/_4$ — Մէջաւէ.

Ա րի աշէր գո նեա՛ մայրմեր Սըմե նի ա
ահա մեզա զատու թեւն:

Կրօն ու լեզու ազգութիւն
Կամ անձնազոհութիւն
Այսուհետեւ քեզ երդուենք:
Թող լսի Հայաստան
Այս հանդէս մի օրուան,
Բառնայ, գէթ սուգ տրտմութիւն:
Կգայ օր՝ որ կրկին
Կհասնենք մեր փառքին
Եւ կառնենք վրէժխնդրութիւն:
Այսօր մեր քաջ արքայն
Քանդելով մեր շղթայն
Տուեց մեզ ազատութիւն:

## 12.

### ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ.

4/4 — Չափաւոր.






Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած,
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից,
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի,
«Ազատութիւնը» սիրել:
Թոթով լեզուիս մինչ կապերը
Արձակուեցան բացուեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն որ ասացի,
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ.
«Ազատութիւն» դուրս թռաւ,
Իմ մանկական բերանից:
«Ազատութիւն, ինձ կրկնեց
Ճակատագիրը վերեւից,
«Ազատութեա՞ն դու զինուոր,
Կամիս գրուիլ այս օրից:
Ո՛հ, փշոտ է ճանապարհդ.
Քեզ շատ փորձանք կսպասէ.
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհս խիստ նեղ է»:
—Ազատութի՜ւն— գոչեցի—.
Թո՛ղ որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ դաւ դնէ թշնամին,

Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ,
Անդադար «ազատութիւն»:

Մ. Նալպանդեան:

## 13.

### ՈՂԲ ՋՈՒՂԱՅԵՑՒՈՑ.

5/4 — Չափաւոր.




Գերի գնամանաք դէպի Խորասան.
Քաղցած ու ծարաւ տկլոր Թշուառական:
Խարխիր ու խաղար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոտք դուրս չը դրաք:
Խիմի ձեր խոր մոր գերեզման Թողաք.
Տներն ու ժամերն աւրիշի տուաք:
Էն սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերը.
Ո՞ւմն աք Թողման գուք, որ գնամանաք.
Էսպէ՞ս կ՚լնի որ մոռանում աք:
Վախում ամ էնպէս մոքերուցդ ընկնի,
Ինչքան որ ողջաք մոքերնուդ չ՚ընկնի



Բարի ձեր որդւոց Թոռանց պատմեցէք,
Էսպէս խայրենիք քանդած Թողեցիք:
Մասիսի անունն, Նոյա տապանի,
Արարատ դաշտի, սուրբ էջմիածնի:
Մեր Խոր-Վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զմոռանան մինչեւ ի օրն դատաստանի:
Աչքս կուրանար, շլինքս կտրուէր,
Խե՜ղճ Հայաստան, քեզ էսպէս չը տեսնէր:
Թէ մեռած էի, ինձ երանի էր,
Քան Թէ կենդանի աչքս բաց տեսնէր:

Ստեփան Նազարեանց:

## 14.

### ԻՂՁ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ.

5/4—Չափաւոր.



Տե՛ս ի՛նչպէս սիրոյդ եւ քու կարօտոյդ,
Վառուած, բորբոքուած քո տեսոյդ ցանկան.
Արի կաց ուրեմն ով մայր Հայաստան,
Նոր ոգի զգեցիր փառօք անվախճան:
Օ՜ն զրահաւորիմք ով որդիք Հայկեան,
Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան,

Մէջ-ձայն.

Զօրա նանքսի րո վ եւսուրբ միու թեամբ

ըկա լ ախո յեա ն ընդդեմ թշնա մեաց:

Զափ-առ.

Հա պա գոր ծե լու ժա մա նակն հա սաւ,

հայ րե նա սի րին կայ փառք ան զը րա ւ:

Ս. Պ. Պ. Փափազեան։

15.

## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԵՐԳ ՇԻՆԱԿԱՆԱՑ.

3/4—Չափ-առ.

Ա յմարդ այսօր շառքը նեցար, նընջե ցիր,

առա ւօտեան հովժա մանակն անցու ցիր.



Ա րե գակը ծոլլի ծայրէն ծագե ցաւ:

ջերմու թիւնը ձօրնու դաշտը փռուե ցաւ:

Ընկերներդ վաղ արտերը գնացին,
Ցօրեն գարին գերանդիով հնձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նստան հանգչիլ կաղնիների հովումը:
Ա՜յ մարդ վերկաց սառը ջրով լուացուիր
գոտիդ կապէ, գերանդիդ առ դաշտ հասիր,
Քանի հովէ, հունձդ արա արտումդ,
Հունձդ հնձէ, մի ծուլանար գործումդ:
Հունձդ կապէ՛, բարդդ բարդէ տուն արի,
Հանգստացիր, երբ քո հունձդ կատարի,
Բեր գերանդիդ, կախէ պատին քո տանը,
Ես խրիկուան կը պատրաստեմ սեղանը:
Ա՜յ մարդ, հերիք ինչ որ այսօր քնեցար,
Աչքդ մէկ բաց, տե՛ս թէ որչափ ուշացար.
Մեր դրացին վաղ անցկացաւ կամուրջէն,
Վաղ լռել է մեր գիւղը ձայներէն:
Ի՞նչ ես պառկեր, ի՛նչ ես քնել, սիրական.
Արեգական շողը հասաւ մեր դրան.
Մի ծուլանար, ժամանակդ խնայէ,
Այն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակրէ:

Ռ. Տ—Գր. Պապջանեան

## 16.

«ՅԱՌԱ՜Ջ», ԼԵՒՈՆ Զ.

4/4 — Չափաւոր.






## 17.

ԱՒԵՏԱՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌ ՀԱՅ ՏՂԱՅ.

4/4 — Չափաւոր.




գրադարան
552-2008

Ջոյնս ա ղատուլթեան, ողջոյնսի րո յ եղ բայրուլթեան·

վերջ վիճա կի գե րուլթեան ձեր յերկ նից Հա յոցս ա :

յս էպատուէր, դարե րէ ի վեր ա րինար ցուն քով,

Թըշ ուառՀայ րե նեաց քաղցր աւե րակ ներ

Թուչող Հրեշ տակն ալ աՀա՛ լինձ ըն կեր

վկայ է խօս քիս լինդում երե սով:

Ա յոա յո Հայտը ղաք վը կայ ես ձե -

ր Հրեշ տակ· Հա յաս տա նի Նոր գար նան

ծաղ կունքա Հա ձեղ կու տամ:

Օն արդքորք եւեղ բարք, որդիք գիւցա զանց· գերթ

Թուչներ գարնան, գեղ գայլայ լի կով սուրանք



փոյթի գի րկ Հայրե նիփա ռաց, Հայրե նիփա-

ռաց· աստ Թողումք վատթար սրտեր յետաւ նունքսէր ատե-

լութիւն օսոխն Հայուն աստթո ղումք աստ աստթո ղումք

աստ : Եւ արդ Հօսի սեւ կը րից զինա Թափ

ամէնքս ալՀա ւա սար Հայ եղ բայր մեր զէնքն խաչնի կուր

ծըսլաւ ի վառ, օն ըղՀետ Հրեշ տակիս ծափ

ի ծափ: Ջար նենքտա ւիղ ոս կեղը -

Նար, սըր բենքդա ռը ն ցա ւիա չեր· աշ խոյժի սիրտ

ձայն վարու վեր, ապ րի Հա յոցս ա ւետա բեր· ու -

րա խու Թիւնս այս Հայոց տար օնպար խաղ·

մէնմի ձախ, մէնմ'ի յաջ ետա ռաջ ու րա -

խու Թիւն այս Հայոց տար ու րա խու Թիւն այս Հայոց տար:

Չէր. ազգեր Նիս մէկ, լեզու Նիս մէկ, Հաւատ Նիս

մէկ, Հայրե Նիք մէկ, Հայրեր Նիս մէկ, փառքեր

Նիս մեկլին չու Հըլլայ սրտեր Նիս մէկ:

Ներսէս Մեզպուրեան:

18.

ՈՒՂԵՐՁ ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

$^{4}/_{4}$—Չափաւոր.

Բա բէ քանի Հրաշա փառ, Հիւ սեն եր կինք Հան-

դէսպայ ծառ, մինչ ա բեգլին ճա ճանչա վառի լոյս շող-

շող, ի տես կայ տառ: Նվքբոր բոքէ զանսիւն կա մար

եւի Համ բոյր յար բարե րար. ճեպէ աՀա

բնու Թեան խլար ամա Նո րոյ ի մուստ բարոր.



ձօ Նելպար գեւսէ խցկա ճառ. ո՜Հ, Հրաշա լեաց

շնորՀին ան ճառ, փառք բարձրե լոյն փառք անդա դար

վեր ուղ ղես ցին օրՀ Նա բար բառ: Դու վեՀա փառ

Հայր պատ ուա կան, Դույոյս Հա յոց, Դու սէրՀայ կեան,

Դուտէր եւ պետ ան ղու գա կան փայ լխար դեամբ

մեզ խպար ծանս. յա ւուրսսեր կեան ա մանո բեայն

Հայցել յեԹերց զամ բարու Թեան: Ար գասա բերյօ-

գուտՀայ կեանեւ շնորՀի պսակ ա զատու Թեան ա զա տու՟

Թեան: Զի կեց ցէ միշտ ե բՋան կա փառ

կենօք պայծառ յամն յա մա յրկեց ցէ Դէ որգ:

կա Թուղի կոսիք բեւզար փինճա ճանչա վառ

կեց ցենան յաղթ Հայկազ նո րեար ան փորձեւ զերծ
յո սո խաց չար կեց ցէկեց ցէ Հա յութիւն յար
կեն դանաս ցին Հա յոց աշ խարհ:
կեցցէ կեցցէ մեծա պայծառ եւն զեցի սուրբպեր ճափառ,
ա հաայ սոր, ի միբար բառ, յայս ուխտուհա յոց,
ի սիրտսի վառ. այսուխտս Հայոց խիրտս ի վառ:

Վ. Վ. Մանկունի.

---

## 19

### Ի ՇԱՒԱՐՇԱՆ ԴԱՇՏԻՆ ՎՐԷԺՔ,

4/4—Միջակ.

Բամբ որո տան բարձուստ ռմբինք Այրա րատեան
դաշտնի վայր Արի արանց արիւնքն յեռանդն
առա տանան ինհրա գայր: Հրաւէրք հայրե նեաց



հռչա կի՛նդհա նուր հոգիք Հայկա զանց
քորքո քինի հուր. որք երկ նաւո րի պսա կին էքկա րօտ,
որք երկ նաւո րին փա ռաց երկնա յորդհապ՛
օն արիա րանց ման կունք, հայրենա վրէժք Հայկա զունք
Հապ՛օն իղձն գունդա գունդ յեռեալ իպար թունդի թունդ
իղձնի վրէժօն անդրյա ռաջ իղձնի վրէժմի
Ձախմի յաջ, միձախ մյաջ, օնանդր յառաջ, յառաջ, յառաջ
Հապ՛օ ն յա ռաջ :

Այս երգը առնուած է «Սանդուխտ» ողբերգութենէն:

---

## 20.

### ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂՋԻԿ.

4/4—Զուարթօր:

Գիւղա կան աղ ջիկ եմ ես զամ բիւ ղա չէն

եկեալ աստ զամ բիւ ղօք ի Հա յոց երկ րէն:
Ցուսամ զի Հայ տիկնայք եւ պարո նայք Հընդ կաց
բարձր գինտայ ցեն իմ օի րուն զամ բիւ զաց:
Ա՛ռ զամ բիւղ, առ զամ բիւղ, ա ռ զամ բիւղ
յօ տար աղջ կա նէս:

ԶԱրարատ, զԵփրատ եւ զՏիգրիս Թողի
Միայնակ շրջիմ աստ յեզերս Գանգէսի,
Պանդուխտ եմ, օգնեցէք անտերունջ անձինս,
Զի ծնողք ձեր յառաջ աստ պանդուխտ էին:
Առ զամբիւղ եւայլն:

Զամբիւղք իմ են յարմար աստղագործութեան
Պահել անդ զմատնոց, զԹել, զասղաման.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսեան
Երբ խաշինք եւ գառինք իմ զինեւ խայտան:
Առ զամբիւղ եւայլն՝

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայսմ աշխարհի:
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի,
Զայգի մի ունէի, զամբիւղ գործէի,
Նոկ կաԹամբ եւ պտղով երջանիկ էի:
Առ զամբիւղ եւայլն:



Աստ սերկեւիլ, ծիրան խաղող չի կայ,
Բայց միայն ադալ բիլա ու քիլայ,
Ա՜խ, ե՛րբ իցէ, զի արժանի եղեց վերստին,
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին:
Առ զամբիւղ եւայլ

Ապա դուք լաւ կանայք՝ զամբիւղս իմ առէք
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք,
Զի դարձեալ յերկիր եմ Հանդերձ ձեր շնորհօք,
Զերախտիս առեալ, գովեցից բազմօք:
Առ զամբիւղ եւայլն:

Մ. Թաղիադեանց

## 21

### ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ ԳԱՐՈՒՆԸ.

2/4—Չափաւոր.

Գարունն ե. կա ւ ծաղկը նե րով եւա -
նու շա կ վարդխո տե րով. վարդնու շուշան
փԹԹին ցողով ուփայլ փայ լին արփւոյն շո -
ղով, վարդնու շուշան փԹԹին ցողով ուփայլ փայ լե -
ն արփւոյն շո ղով:

Հայ աղջկայ սիրտն է այրած
Աչքին արցունք ծով է դարձած,
Հայրենեաց սիրով տոչորած.
Մօրն օրօրոց կերգէ անուշ
Հօրն ալ տաղեր ո՜հ ի՜նչ քնքուշ:
Ո՜հ ինչ աղու, ինչքան տխուր՝
Ձայն քնարին ընթանայ զուր,
Քրոջ ճակատ պսակ հիւսէ
Եւ «Թագուհի ես» կը յայտնէր
Եղբօրն ալ իմ հրճուանք եւ սէր
Իղձ եւ փափագ երկնից նուէր
Ո՛հ, թէ ձայնիս չտաս մի վանկ
Այլ կշատնան իմ հառաչանք
Ո՜հ, թէ այս է բաժին իմ փառք.
Այս պիտ լինի իմ վերջին կեանք
Թո՛ղ Հայաստան աշխարհին.
Ինձ հետ Թափառ ինձ հետ ընկեր,
Մասեաց բարձունք Մասեաց սարեր
Լացէք աղջկայ անբախտ օրեր,
Այ Թիռ սիրալիր ձայն երկիր
Որ իմ սուրբ հարց արեամբ ներկաւ կենսաբեր:

Ն. Մեծատուրեանց:



22.

ԱՆՁՈՒԿՔ ՀԱՅ—ՄԱՆԿԱՆՑ.

6/8—Չափաւոր.




Կարօտ մնամք սարիդ, դաշտիդ,
Եւ ոսկեգոյն արեւուդ,
Միայն առ Տէր այս պաղատիմք
Որ ունենայ առ ձեզ գութ:
Գիտնայ եւ բաղդն, զի հայ մանկունք
Ձեն զիմանար այս ցաւուն,
Քեզի համար մեր աչքերից
Հոսէ արցունք զօրն ի բուն:
Քեզի միայն մենք կը յիշենք
Թէ քուն ըլլամք թէ զարթուն.
Տրտում տխուր միշտ քեզ երգենք
Այրած հոգւով մեր կեանքում:
Շատ երկիրներ թէպէտ տեսանք
Բայց մեր սիրտը քեզ սիրեց
Ո՛հ, չեմ գիտեր առաւօտուն
Մեր ցաւն ինչպէս քեզ տիրեց:

Քո բերդերուդ արդեօք սեւ հող
Անգթաբար ով ծածկեց.
Ա՜խ, ով էր որ նա քեզ մեզնից
Գերւոյ նման խուկ զրկեց:

## 23

### ԱՐՄԵՆՈՒՀԻ.

6/8—Դանդ.




Ընտանեկան կենցաղում իրաւունքի տէր ես,
Ամեն մի անդամն տան՝ քեզ պատւում մեծարում.
Ամուսնական վիճակում մտերիմ ընկեր ես,
Օրինակ ես գովութեան ամենայն աշխարհում:
Թագիդ վերայ մի ակը չի երեւում «չկայ»
Որ տայ Հայ տանտիկնոջը առանձին շքեղութիւն.
Քեզ վայել է ներկայում մի այլ նոր առարկայ.



Լուսաւորութիւն ասեմ, ո՜հ, լուսաւորութիւն:
Միմիայն թէ քո Հայկական մտաց արշալոյսն,
Պէտքէ Մասեաց գագաթիւ իւր ծագումն առնի.
Խորթ ուսմունքներից չկայ Հայ մայրութեան յոյսն,
Այս անոյշ մահաղեղն ընաւ դեղաթափ չունի:
Արմենեան քո ծնունդը ձեռը ծնօտին լալիս.
Արձակիր կրթութիւնդ խաւարի կապանքից.
Ով որ մարդկային ազգին կեանք ու սնունդ է տալիս,
Ազգայնութիւն նոյնպէս կ՚ծնանի նորանից:

Մ. Փ.

## 24

### ՎԵՐՋԻՆ ԳԱՐՈՒՆ.

4/4—Մեղմ.




Երկինք ու երկեր քեզ տօնեն, գարուն,
Ջի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրեւ ցօղէ առատ ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկւոր հաւերուն:
Ոսկի արեւը փայլէ քեզ վերէն

Կենսաբեր հովը փչէ ի լերէն.
Ա՜խ, ազնիւ գարուն, եղանակ սիրուն.
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ Տէրէն։
Գլխաքարշ երթամ ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն ի բուն.
Չ՚կայ ինձ հանգիստ, ցնծութիւն սրտիս.
Ես վաղ եմ մոռցել՝ զի՞նչ անդորր է քուն։
Մեռած պատանքած գետնին կեանք տուար,
Տերեւթափ ծառին ստուերախիտ արար,
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր.
Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար։
Առաջ գնա՛, գարուն, դէպ ի հիւսիսն ի խոր,
Գնա՛, կանանչացո՛ւր դու անդ սար ու ձոր,
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարեւ,
Քո ուրախ գալստեամբ նոցա զուարճացուր։
Կուգաս գալ տարի, դու ինձ կու գտնես,
Ո՛չ ի մեր այգին եւ ո՛չ ի պարտէզ,
Այլ անզարթ քընով հողի տակ պարկած,
Գերեզմանաքար մի վրաս կը տեսնես։

Ռ. Տ. Պ. Պատկանեան.

25.

ԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ.

4/4 — Չափաւոր.

Գա րունհա յաս տան գայծաղ կապը սակ
զայնող ջունե լու ելէք հայզա ւակք.



Անցան սեւօ րեր օրեր մահա հոտ հա յոց նորբաղ դի
ծագի առա ւօտ. սահմա նադրու թիւն ուղղե ցոյցկենաց
մի րոյ գրօշտ կով եկաւ զարդար ուած. որ փայլի ա րեւ
սուրբ հայաս տա նի, որհայ ազգու թիւն
փառօք վերած նի կեց ցեն անձնսւ էր
որդիք հայկա զունքկեց ցէ ազ գա յին
սահմա նադրու թիւն։

Կաթիլ մ՚ արտասուք հեղունք աննախանձ
Ի սուրբ յիշատակ մեր քաջ նախահարց.
Կաթիլ մի քրտինք հեղունք անխնայ,
Ի նպաստ Ազգիս յուսոյն ապագայ.
Եւ ո՛չ իսկ խնայենք բոլոր մեր ճգունք,
Կրօնի հայրենեաց եւ Ազգի սիրոյն։
Որ փայլի Արեւ. . . .եւայլն
Հայեր, միանանք, կընենք առաթուր,
Ամէն ուժ եւ նենգ, պարխսպներ ամուր,
Երկինք զայս մեր սուրբ կ՚օրհնէ միութիւն.
՚ւ Աստուած Գրիգորի զօրավիգ արթուն.

Հայոց խրախուսմնք, կուլ ծք տանք անվեհեր.
Ընկճենք կործանենք, ամեն արգելքներ:
Որ փայլի Արեւ . . . եւայլն

Ունիմք սիրտ արի, ոգի եռանդուն,
Ժառանգ մնացած բաղուկ աններկուն,
Դարերու յաղթող Ազգի զաւակ ենք,
Ամէն Նախատինք օն փութով ջնջենք.
Անմահ Հայութիւն կանգնենք յաղթանակ,
Հայոց մոր ճակտին հիւսենք պերճ պսակ:
Որ փայլի Արեւ . . . եւայլն:

Ս. Պ. Պ. փափազեանց:

---

## 26.

### ԿԻԼԻԿԻԱ:

6/8—Զափաւոր.









Տեսի դաշտերն Ոնորիոյ
Լեռն լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի զերկինս Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր գոնդոլներ:
Կղզի նման չիք մեր կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ.
Ցանկամ տեսնել . . . եւայլն:
Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հէգ լին ի տենչ,
Ցիշատակաց իւր կարօտի:
Ցորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյս տալով վերջին բարեւ,
Երթամ ննջել յիմ կիլկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

## 27.

### ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ ԽՐԱՏԸ.

8/4—Զափաւոր.





ուստագ նապ՝ ե կէքծի ծաղ.ք եւ խաղ.քմ ե զի



Հաճոյք գորով սիրոյ կապ:

Զպակասեն զքօսանք մեզմէ,
Կարեւոր բան մ՚ալ այն է,
Զիս Հրաւիրող ամէնքդ Հոս,
Ձեր եռանդն այս մեծ է:

Բայց պէտքէ խորհիք միամտօրէ,
Թէ ինչ՝ ձեր բաղդն որոշեց
Միշտ սիրեցէք ու բաւէ
Ձեզ երջանիկ այն կընէ:

Դէ՜, սիրոյ Համբոյր տուէք արդ,
Այդ թող լինի մեզ սուրբ զարդ
Հայոց Համար այսպէս պիտի,
Որ նոցա եռանդն զարթի:

Միշտ յիշեցէք ձեր նախնիքը,
Ամուր պաՀէք այն պարտքը,
Որ միշտ Հնչուի ձեր ականջին,
Հետեւեցէք այս դարին:

29.

ՀՈՎԻՈՒՀԻ.

4/4 — Չափաւոր.



Եսեմ որ բի կ խեղճՀով ւու Հի աշխարՀս





է այն գեղմար գը շունսէ մի այն իմսի



րն լի եւըն կե ըըս գառնու կը: Գառ նու կը:

Իմ զարդս են՝ այն ծաղիկները,
Եւ Հայելիս՝ պարզ վտակ.
Պատսպարան՝ անտառները,
Լապտերս վառ արեգակ:
Ադամանդս՝ ժայռ քարերը,
Եւ թանկ ոսկիս՝ անթառամ,
Մետաքսեննիս՝ կանաչները,
Փափուկ, մաքուր, պատուական:
Ես պարծենալ չեմ, կարող չեմ:
Որ եւ իցէ ուսումով,
Միայն քաղցր երգել գիտեմ,
Եւ կեանք վարել սուրբ սրտով:

29.

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ

4/4 — Չափաւոր.



Ես եմ քաջզին ուոր, չու նիմ մաքուր շոր,



Հրա ցա նըձեռ քիս ըըր ջիմ ա մէն օր: Քայլ մ՚ա-



ռաջ քայլ մ՚ալ յետ դի մենք մենք ի բար Հետ. Փըշ րե-

ցէք Թշ նա մին այս խօս քե րը լը-

ուին· դէհեղ բարք ըշտա պով քայլփո խենք

մենքշու տով, շուտվա նենք Թշնա մին ազա տել

Հայ րե նիք:

Գարդ արեւ երկնքում մեզ վերայ է խնդում,
Ինչո՞ւ մեր ազգութիւն սիրել է միութիւն:
Դէհ եղբարք շտապով ելնք:

30.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ.

4/4 — Չափ— ը:

Ե կաւ ժամա նակ բարե կամբաղ դին.

Նոր գա րուներ րաւ Հայաս տաներկ րին ի ջաւ յՍրա րատ,

Հա սաւի Տիգ րիս դար ձաւ դաղրեցաւ կեցաւ իՄա սիս

Եւ ձայնտու աւ ան կէՀա յո ց ձայն մի Թորգո մայոր-



դւոց ձայն մի Թորգո մայորդ ւոց: Որ մերկա նան

ըզ ցուրտձըմ րան վարա գոյր, վարա գոյր

ժամէ արդՀա յերՀա յեր ընկեր առըն կերըն կեր

տամք սի րոյՀամ բոյր, տամքսի րոյՀամ բոյր

Համ բոյր մերըլ լայ վը կայմի ու Թեան,

սաՀմա նադրու Թեան սաՀմա նադրու Թեան:

Եւ շիջելափառ Հայրենեաց խորան,
Բացաւ տխրագին զիւր քող ճգնութեան,
Հասին հօն Մուսայք եւ յուսոյ Հրեշտակք.
Ախորժ երգեցին խնդութեան նուագ:
Եւ սիրտ տուին անկէ Հայոց,
Սիրտ մի Թորգոմայ որդւոց
Որ մերկանան հեռ նախանձու վարագոյր.
Ժամէ արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր
Տամք սիրոյ Համբոյր:
Համբոյր մեր ըլլայ մեր ուխտ միութեան,
Սահմանադրութեան:
Ելայ Հայաստան նոր գարնան ի տես,
Դարձայ ի շքեղ իւր փառաց Հանդէս.

Դարձիր բաղձալուծ քնարդ իմ Հոգւոյն,
Դարձէք աւուրք կենաց, դարձէք յայգ յուսոյն.
Եւ լոյս տուէք անկէ Հայոց,
Լոյս մի Թորգոմայ որդւոց:
Որ մերկանան մութ գիշերին վարագոյր:
Ժամ է արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր.
Տամք սիրոյ Համբոյր:
Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան
Սահմանադրութեան:

Ս. Հ. Պէճկէան:

## 31.

### ԶԻՆՈՒՈՐԻ ԵՐԳ.

4/4—Չափաւոր.




Մէկն ունի մեծ աներ, միւսն գիւղ ունի,
Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի:



Շորերը Թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կեր չոր հաց:
Թէ քաջ պատերազմես, կտան մեծ պարգեւ,
Թէ ոտքդ կորցնես, կ'ասեն մնաս բարեւ:
Ուր գնամ ես մենակ աշխարհիս վրան,
Ահա քեզ լաւ վաստակ քան եւ մէկ տարուան:

Գ. Գոփսէան:

## 32.

### ԶԷՅԹՈՒՆԻ ԵՐԳ.

2/4—Մեղմ.




Դեռ եւս քո զօրեղ բազկում
Ռուբինեանց երկիրն է շարժում,
Ցեղատակ նախնի դիւցազանց
Պատկերն է քո քաջ զաւակաց:
Հելլէ . . . եւ այլն:

Մզրախտ է ունեցած կայքն
Քո ապրուստն է եւ քո կայքն.
Բռնութեան լուծն Թուրք մարդու
Եդ զէնքով ես Թոթափել դու:
Հելլէ . . . եւ այլն:

Կեցցէ՛ Գրիգորեան Հաւատը,
Հայ պահել իւր ժողովուրդը,
Ո՛չ մի կրօն աշխարհիս վերայ
Չ'ունի ազատ ոգին սորա:
Հեյյէ . . . եւ այլն:

**Մ. Փ:**

## 33.

### ԱՂԱՍՈՒ ՄՕՐ ԵՐԳԸ.

3/4—Միջակ:




Բո՛ւ քեզ որքան բարի հրեշտակք հեքաթ ասլն երազում
Այժմ արի քեզ այն պատմեմ ինչ պէտ՛ տեսնես աշխարհում,
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քնես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը,
Կեանք ու արեւ է տեսնում:
Դուն կմեծանաս, բոյ կը քաշես—չինար բոյիդ ես ղուրբան
Քեզ ուժ կըտան Մասսի քաջքը, որ դու լինիս քաջ Վարդան,
Իմ մատներով մի ոսկեթել մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիկըդ թուր կը կապեմ, այն էլ ինքս եմ արել:
Զարթիր՛ որդեակ, քանի՞ քնես
Բաց աչերդ այդ նախշուն
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը
Կեանք ու արեւն է տեսնում:
Մեր բակումը ձի է կայնած քեզ է մնում անհամբեր,
Զարթի՛ր, որդեակ, քա՛նի քնես, ա՛ռ թուրը մահաբեր:
Քու Հայ ազգը հեծեծում է, ձեռքը, ոտքը շղթայած,
Քու եղբարքը գերութեան մէջ . . . քաջ, միայն դու ես
քնած . . . .
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քնես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իւր բաղդ, փառքը
Կեանք ու արեւն է տեսնում:

**Ռ. Տ—Պ. Պատկանեան.**

## 34.

### ՇՈՒՇԱՆԻԿ.

2/4—Միջակ:



է ի ր մեր ա մե նի ս դու մայր

է իր գըլխա ւատ, արդշե ւա նաս

մեղմուխ պա տէ ան փա րատ:

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անգամ.
Լուանայիր, դեղ դնէիր ամեն ժամ.
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանքն ազգիդ համար էր ազապ:
Արդ Հայոց զօրքն իւրեանց մօրից որբանայ,
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:
Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
Մեր սիրտ, հոգին քեզ հետ տանիս մայրուհի.
Գնաս բարեաւ, մեր լոյս հաւատն քեզ ընկեր,
Աջն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր:

Յ. Կուբինեանց:



## 35.

### ՀԱՅՐԵՆԻՔ.

4/4 — Չափաւոր.

Թէ իմս հայրե նեաց քնար սըգա ւոր

հե ծէ տխրա գին իմ հո գիսէ այն, թէնո րա բեկ բեկ

Թելեր վշտա ւոր խօսի ողբա ձայն, իմ սըր տիկսէ այն:

Թէ Հայ մուսային սրտառուչ նուագ,
Դեռ կ'եղերերգէ, հառաչանքս է այն.
Թէ Հայաստանիս սեւ բաղդին հագագ,
Լայ ազնիւտուր, հեծեծանքս է այն:
Թէ իմ Հայրենեաց կիսամեռիկ շունչ,
Դեռ յսի տխուր, իմ ողբերս է այն.
Թէ լռիկ մնջիկ հեծէ անշըրշունջ,
Ո՜հ, անկարեկիր, իմ լալիքս է այն.....
Թէ Հայկ եւ Արամ, Վարդան, Վահաններ,
Ընկած տեսանես, իմ ուժս է այն.
Թէ զէնք, թէ զրահ, թէ սուր, թէ սուսեր,
Փշրած կոտորած՝ ոսկորներս է այն....
Եւ կիսակործան տաճարն Հայրենի
Սեւ սուգ է պատեր՝ սաղաւարտս է այն,
Ուր շիջելավառ կանթեղ դեռ հիւծէ,
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյսս է այն:
Ուր տխուր նստեր մազերն են ծածկեր

Իւր սեւուկ աչքեր՝ սիրականս է այն,
Ձեռքերն ի ճակատ՝ կռնակն ի հողեր,
Ցուսով կռթըներ՝ Հայաստանս է այն
— գերեզմանս է այն:
Ուր երբ տեսանեմ զիմ հէգն Հայաստան
Ի գաՀ իւր փառաց՝ իմ բաղձանքս է այն.
Ցայնժամ թող մեռնիմ յիւր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս միակ ուխտս է այն:

Ս. Հ. Պէշլէկեան:

36.

ԻՂՁ ՊԱՆԴԽՏԻՆ.

3/4—Ծանր:









Թէ դեռ յիմ արիւն չ'խառնուէր թոյն,
Դեռ երակացս մէջ աշխոյժ խաղային,
Ո'Հ, քանի՜ Հպարտ կանչէի ազատ:
Թ'եկէք Հայեր . . . . եւ այլն:
Թէ կեանք ունէի ո՜Հ կ'լարէի
Թել քնարի՝ բաղդին Հայոց անկենդան,
Որ նա ձեզ խօսէր, ձեզ պանդուխտ Հայեր.
Թե՛կեք Հայեր . . . . եւ այլն
Թէ սէր ըլլայի կամ անմաՀ Հոգի
Կ'կապէի Հայոց սրտերն անմեկին,
Ցայնժամ եւնոքա մի որդիք Հայկայ՛
Կը'լանք ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրենք ընկեր զընկեր սիրենք կաթոգին:

37

ԾԵՐՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ.

4/4—Չափաւոր:





րէչ դառնա յի՝ նէույգձինըս տած բէնէրսուլօ բած



ձեռըս թուրա ռածես դաշտ կերթա յի:

Ես դաշտ կերթայի դաշտ Աւարայրի,
Ողողած ցօղած Հայոց արիւնով.
Ազգ իմ սիրեկան, դու ազգ Թորգոմեան,
Քո կորցրած Թագը քեզ յետ կուտայի:
Կասէի Հայոց օրխորդներին.
«Թախեցէք Հագի ձեր Թանգ շորերը,
Թողէք պաճուճանք, զարդ, մարգարիտներ»
Ժանգոտած ու գուլ են մեր Թրերը:
Տուէք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը.
Վիրակապ հիւսէք դուք ձեր մազերից,
Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը:
Թէ ես լինէի Հարուստ մեծատուն.
Որնտուկներս լի ոսկւով, արծաթով,
Շատերու նման ես չէի լինել,
Երբէք ազգասէր ունայն խօսքերով:
Շամպանիա գինու, ալմաս խաչի տեղ,
Կ'առնուի առատ գնդակ ու վառօդ,
Արձակ Համարձակ կերթայի Հանդէպ
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով:
Թէ ես լինէի մի երկրի իշխան
Կուտայի զօրքիս սաստիկ Հրաման,
Շուտաքայլ երթալ դէպ ի Հայաստան,
Խղճուկ Հայ ազգին լինիլ օգնական:



Եւրոպ՝ Ասիա արեան գետերը,
Կը վազեցնէի Հեղեղի նման,
Մինչեւ որ Թագ, գահ եւ ազատ կրօն.
Ինձնից չըստանար Թ.ուառ Հայաստան:
Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ,
Աստուած լինէի մեր Հողագնդին,
Ի՜նչ սուր ոլաքներ պիտի շաղ տայի,
Մեր արիւնարբու Թշնամեանց գնդին:
Նենգ . . . : Պարսիկ ոխերիմ,
Դարեւոր ոսոխ դու Յոյն կրօնամոլ.
Գիտցի՛ր որ՝ իմ սուր երկսայրի սրից,
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին:

Ռ. Տ. Գ. Պատկանեան.

38.

ԵՐԳ ՑԱՒԱԳԻՆ:

4/4 — Զափաւոր.



Իմ սիրե լի զա ւա կուն քը ս կը -



Թափա ռեն օ տար աշ խարհ, ես ուր դի մե -



մ, ուր փըն տը ռեմ, կը ծա ռա յեն այ -

լոց խո Նարհ, ես ուր դի մե մ ուր փըն-
տը ռեմ, կը ծա ռա յեն այ լոց խո Նարհ. ե -
կայ.ք որդեա կըքիմ ձերմծ ըն այցե լութեան, ձեր մծ -
ըն այ ցե լու թեան:

Դարեր անցան լուր մը չառի.
Իմ քաջերս մեռան կորան,
Կուլամ արիւնըս կը սառի . . .
Մէկը չունիմ տայ ինձ դարման:
Եկայք որդեակք . . . եւ այլն:
Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան.
Եւ կարօտոյն իմ որդեկանց,
Պիտի իջնեմ սեւ գերեզման:
Եկայք որդեակք . . . եւ այլն:
Եւ դու Հովիւ Թափառական.
Կերգես տխուր ի մէջ հովտաց.
Ե՛կ արտասուենք թանկ կորստեան
Տխուր մահուան մեր որդեկաց:
Իսկ դու՝ կռո՛ւնկ իմ Հայրենեաց
Գնա՛ հեռո՜ւ աչքէս ի բաց . . .
Ցեղին ողջոյնս տար զաւակացս
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած:
Եկայք որդեակք . . . եւ այլն:



39.

## ՊԱՐ ՀԱՅՈՑ ՆԱԽԱՐԱՐԱՑ.

4/4—Մէջակ:

Իգո՛ւր են իգո՛ւր, բռնա ւոր ըս պառնա լեք
քո ամե նայն, իգո՛ւր են իգո՛ւր բռնա ւոր
ըս պառնա լեք քո ամե նայն Յորդոր.
ոչ քո շղ թայք չեն զօ րա ւոր յընկճել զո գիս մեր
Հայ կա կան. ոչ քո շղ թայք չեն զօ րա ւոր
յընկճել զո գիս մեր Հայ կա կան:

Ըզ մարմին, միայն զայս մարմին
Կարես գերել, քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային,
Սիրտ Հայկազանց են միշտ ազատ:
Ազա՛տ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել ըզշանթս Արդարութեան
Ի գլուխ ձեր, ո՛վ արիւնարբուք,
Որ աւերէք զՀայաստան:
Ի գժո՛խս անկցին թշնամիք,
Անհետասցին մինչ յաւիտեան,

Կեցցեն Արքայ եւ Հայրենիք.
Կեցցէ անմահ մեր Հայաստան:

Խորէն Եպիսկոպոս Գալֆայեան:

## 40.

### ԻՆՁ ՀԱՄԱՐ ՉԷ.

4/4 — Չափաւոր:




Ինձ համար չէ կենաց բաղդը,
Ինձ համար չէ երջանկութիւնը
Եւ մրայօն կուսի աչերը
Նոցա արցունք չեն ինձ համար:



Ինձ համար չէ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը.
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:
Ինձ համար չէ բարեկամաց
Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրուայ ուրախ ասելը,
«Քրիստոս յարեաւ» չէ ինձ համար:
Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կ՚երթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գնդակը,
Անդ պատրաստած է ինձ համար:

Ռ. Տ — Պ. Պատկանեան.

## 41.

### ՀԱՅՐԵՆԻՔ.

4/4 — Ծանր.



Մխիթէ արծաթ, ոսկի, գոհար,
Կափոփէ Հայաստանը·
Այն որ կ՚ողբայ որդւոց համար,
Խղճալի Հայաստանը:

Խոր տխրութեան մէջ է թաղուեր
Թագուհի Հայաստանը,
Բոբիկ ոտքով ազատ մազով
Կարտասուէ Հայաստանը:

Անգութ երկինք ալ չը լսեր,
Մոռցեր է Հայաստանը·
Անսիրտ Հայերն ալ չեն սիրեր,
Անուշիկ Հայաստանը:

Ո՜հ, թողէք զիս խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը,
Անուշ երկիր, կոյս անարատ,
Աննման Հայաստանը:

Արեւ ծածկեր է իւր դէմքը,
Խաւար է Հայաստանը,
Հայոց արեւը ալ մարել է,
Սեւ հագեր է Հայաստանը:

Թշուառ սրտիս ձայն կը կտրէ
Ողբալով Հայաստանը·
Ո՜հ, չի կայ Հայ, որ սփոփէ,
Նուաղեալ Հայաստանը:

Թէեւ կտրի իմ վերջին շունչս
Պիտի պոռամ Հայաստան,
Գլուխս մէյ մ՚իմ Հայրենեաց
Հապա մտնեմ գերեզման:



Անգթրութիւն ես կը խնդրեմ,
Սիրելի Հայաստանին,
Կտրել այս ձայնս չէ չէ կարող,
Սոսկումն գերեզմանին:

Ա. Հայկ.

---

42

## ԵՂԲԱՅՐ ԵՄ՝Ք ՄԵՔ.

2/4 — Մ՝եղմ.



կաւէ լն քէ լնքզատ ուած բազդի նա մենա մե -
ն ոխ չարա նենգ իմի համ բոյրըը ր -
ուինցըր ուինի բաց: Ընդ աստե ղօք ինչ կայսի րուն
քան զանձկա լի եղ բայր ա նուն: Ընդ աստե ղօք
ինչ կայսի րուն քան զանձկա լի եղ բայր ա նուն:

Երբ ալեւոր մայր Հայաստան
Տեմնէ զորդիս լուր քովէ քով,
Սրտին խորունկ վէրքն դաժան,
Թացցր արտասուաց բուժին ցօղով:
Ընդ աստեղօք . . . եւլն

Մէկ տեղ լացինք մենք ի հնումն,
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր եւ ըղ խնդումն,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:
Ընդ աստեղօք . . . . եւլն:

Մէկ տեղ հոգնինք, մէկ տեղ ցանենք,
Մէկ տեղ թափին մեր քրտինքներ.
Ըղ հունձ բարեաց յերկնէն հանենք
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր:
Ընդ աստեղօք . . . . եւլն:

Մ. Պէշիկթաշլեան.



## 43.

## ԾԵՐ ՄԱՍԵԱՑ ՈՂԲԸ.

4/4—Չափաւոր.

Նը սիրմա նուկհա յա ս տան, ծեր Մասեաց ող բերգու-
թեան, ըը սիրմա նուկհա յա ս տան ծերՄա սեաց
ող բերգու թեան, պարսա ւամը շան թը -
նհայ րե նեաց իւրեղ բօրըն թայցքը կենաց ո -
հ, ո՜հ, ծերունւոյսկըս կըծա նաց:

Ո՞ւր են իմ արգանդածինք,
Որոց ջամբեցին իմ սանինք,
Օր օր քնա-երգն մռռացան
Իւրեանց մօր երկունքն ուրացան:
Ո՜հ, ո՜հ յոյսերս ունայնացան:

Ո՞ւր են իմ բնիկ կրօն ու ծէս
Որով հանդերձեցի ձեզ.
Սուրբ աւանդս անարգեցիք,
Սղանդներով պատուաստեցիք.
Ո՜հ, ո՜հ, մինչ անդրոհ ժառանգեցիք:

Եդեմական բարբառով
Վարժեցին ունկնդ սիրով

Այժմ Հայութեան մթնորդն,
Պղծում է քո խորթ կոկորդն,
Ո՜չ, Ո՜չ, գուշակում քո կորուստդ:

Բարքն ու վարքը իմ սէրիս
Օրինակ էր աշխարհիս,
Այժմ խորթուկակ էք դարձել
Ցիշոցի անուն էք տուացել.
Ո՛չ, ո՜չ, իմ վախճան մերձեցել է:

Մ. Փ.

44

ԾԻԾԵՌՆԱԿ:

3/4—Տրանը:


Ծիծեռ նա՛կ, ծի ծեռ նա կ, դուգար նանսի -


բունթռչնակ, դէպի ո՞ւր, ինձա սա՛ թռչումես այդ -


պէսս րագ:

Ա՜խ, թռի՛ր, ծիծեռնակ,
Ծընած տեղս Աշտարակ,
Անդ շինիր քո բոյնը
Հայրենի կտուրի տակ:
Անդ հեռու ալեւոր
Հայր ունիմ սգաւոր,



Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ օր:

Երբ տեսնես դու նորա՝
Ինձնից շատ բարեւ արա
Ասա թող նստի լայ
Իւր անբաղդ որդու վերայ:

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով ողբալով
Կեանքս մաշուել, եղել կէս:

Ինձ համար ցերեկը,
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չի գալիս:

Ասե՛ր, որ չի բացուած
Թառամեցայ մնացած,
Ես ծաղիկ գեղեցիկ
Հայրենի հողից զրկուած:

Դէ՜հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ,
Դէպ ի Հայոց երկիրը
Ծնած տեղս—Աշտարակ:

Գր. Դուրուխեանց:

## 45.

### ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ.

4/4 — Չափաւոր։



Ծաղիկ ունիմ նարընջ ի, ջան գիւլում ջան ջան,
Գիրկար գալը լաւթան է, ջան գիւլում ջան ջան



Ախպէր արի՛ դուփըն չի, ջան ծաղիկ ջան ջան,
Էլ մի՛ մանգայ խաւըն չի, ջան ծաղիկ ջան ջան:

Անձրեւ եկաւ շաղալէն, ջան գիւլում եւլն:
Ուռու տերեւ դողալէն.
Հրէս եկաւ իմ ապէրն,
Ալ ձին տակին հաղալէն:
Իմ ապէրն սարումն ա,
Շուլն գոտկածալումն ա,
Ախպէր ջան, շուլդ ածա՛,
Քիրդ Լոռուայ քարումն ա:
Ա՜յ տղայ դու սեւ չուխաւոր,
Սաղմոսը ծոցիդ սովոր,
Էրնակ կտամ էն օրը,
Տունս կ'գաս Թագաւոր:
Ա՜յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տօրօն ծաղիկ.
Տարէնը մի հետ կ'գաս,
Գամ քեզ օրօն ա՛յ ծաղիկ:
Իմ ապէրս ծառի տակին
Սաղմոսը կռնա տակին,



Սաղմոսը գիր ա դառել,
Լեզուն բլբուլա դառել:
Արեւը կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար,
Ցխտուն օր պաս եմ պահել
Իմ աղպօր ճամբի համար.
Քարխ տակը քարոտ ա,
Գարնի ձիանն արօտ ա,
Թամամ օխտը տարի ա,
Քոյրն ախպօրը կարօտ ա:
Մեր դռանը ուռի ծառ,
Ոսկէ կաքաւ վրէն թառ.
Երթայր ու գայր օրօր տայր,
Ալւան ծաղիկ տանիլ տայր:
Գիւլում կ'ասեմ կ'շարեմ,
Տօպրակը կ'ածեմ կը լարեմ
Թամամ աշխարհը ման կ'գամ.
Քեզնից լաւը կը ճարեմ:

Ժողովրդական:

## 46.

### ՎԱՑՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂ.

4/4 — Չափաւոր.



«Հայրի՛կ, ա սաց դուստրը հօ րը,



Կապոյտ եր կը՛ն քի՛ վե րայ,

Հայրի՛կ, ա սա ց դուստրը հօ րը
Կապոյտ եր կը՛ն քի վե րայ,
Ո րքան աստ ղեր փա յլու մեն վառ,
Ասես հա մար թի ւ չը կայ:

Ասումեն, որ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ճշմարի՞տ է սա՛, հայրիկ,
Իմը որտե՞ղ է փայլում:»

—Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար:

«Հայրի՛կ, տես, տես, աստղը թռաւ,
Ցեղքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը
Միւս անգամ ալ չերեւեց:

—Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացի՛ր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խեղճ ասածը չ՚գիտէր:

Աղքատները նորա դռնից
Գիշեր ցերեկ հալածուած,



Մի մարդ չը կար նորան ծանօթ
Որ չ՛լինէր վշտացած:

«Հայրի՛կ, տես, տես, աստղը թռաւ,
Ցեղքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւեց: Եւլն:

Մ. Նալբանդեան.

## 47.

### ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅՆ.

4/4—Չափաւոր:

Հայրենիքսըր բա ղան իմ սի րունաշ խարհ.
Թոչու մեմ դէ սլի քեզ հոգւովս անդա դար:

Բայց աւա՜ղ այս բանտում
Փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում
Չ՚եմ կռւում եւ ես:

Հանապազ տանջուեցայ
Քո ճակատագրով
Սրտումս շղթաների
Ջայներ կրելով:

Թո՛ղ այստեղ չարչարուիմ
Անծանօթ կապուած

Միայն քեզ Հայրենիք
Տեսնեմ ազատուած:

Մ. Պէշիկթաշլեան:

## 48.

### ԱՐՇԱԿԱՑ ԵՐԳ.

2/4—Մեղմ:

Հայպքա ջագունք, Հայոց զա ւա կունք.
Առէքա ղեղունք Իմաց ե րա գունք
Անտառքըս պասեն, Կենդանիք սարսեն, Զինուց լիճայ-
նէն Շեշտակի նետեր Թափեցէք քաջեր
յերես անվե հեր: յերես անվե հեր:

Վազեմք ուր վտանգ
Ցայս մեր ըղ բոսանք,
Որոց արշաւանք
Մարտից են կրթանք:
Երթամք գունդ ի գունդ
Ցաղեղ եւ մկունդ,
Ցուսով սրտաթունդ



Նամփրեմք կենդանիս
Իբր զԹշնամիս
Ի մեր Հայրենիս:
Զի օր մ'ալ նոյնպէս
Մարտին ի հանդէս
Զարնեմք մահազգեաց
Զոսոխս հայրենեաց,
Եւ յաղԹանակաւ
Կրցեալ աւարաւ
Դառնամք քաջարշաւ
Եւ ի մեր դաշնիք
Ծափ տան սիրելիք,
Պանծան Հայրենիք:

Խ. Գալֆայեան:

## 49

### ԱՆՁՈՒԿ ՀԱՅՐԵՆԵԱՑ.

2/4—Մեղմ.

Հա յաստան, քաղցրիմ Հայաս տան, ոգիքսյա նունդՀալե-
ցա ն: Մին չեւ ցերբեսի քենպան դուխտ, սըր
տիսիմ երբեցցի ուխտ: Աչքսար դեօք անձկա լեցեր-
բեմնըղ քեզտես ցե՞ն: Աչքս այսարտաս ուալից արդեօքդա-

գարես ցե՜ն, Շուրթնիմի հողդ կենսա ւորՏա-

ցէ՜զհամ բոյրուխտա ւորՍր գե՜օք գլուխսվշտա կոծհան-

գիցե՜ քոյդի ծոց, Հա յաստան սէրիմ Հայաս տան, Ս-

գիքսի տենչհալե ցա ՆՄին չեւցե՜րբ եսի -

քէնպան գուխտՍրր տխիմ Ե՜րբ լցցի ուխտ:

Հայաստա՜ն, իմ պերճ Հայաստան.
Ո՜վ երկիր նուիրական.
Հընոց կենաց եւ օրօրան,
Հեշտարար երկնից խորան.
Ի քո սուրբ հովանիս
Ո՜ զնժդեհ տանէր զիս.
Ո՜ւ ի ստուերդ Երազմոյն
Ըզ նախնեացս հեղցէ քուն:

Անմահութեանց վեհարուն
Ծըծել անդ զօդ եւ զաւիւն,
Եւ զաստեացս վշտաց
Գտանել կատարած:

Հայաստա՜ն, քաղցր իմ Հայաստան,
Ոգիքս յանունդ հալեցան,



Մինչ ցե՜րբ ես ի քէն պանդուխտ,
Սրտիս իմ ե՜րբ լցցի ուխտ:

Խ. Եղ. Պուչքաչեան:

50.

ՎԱՆԵՑԻՈՑ ԽՐԱԽՈՅՍ.

2/4—Տաղք: Զուարթ.

Հերի՜ք որդեակ, այսքան տարուայ տառա պա նք,

Հե՜րիք, դաժան անգութ քրդին ոտքնըն կանք.

Քանի խոնարհ գլուխ տուինք գայլե րի

ն. Այնքան ծանըր բեռը դըրին մերվը զին:

Հե՜րիք, ելնենք, ցոյցտանք թէմենք հալրա զա տ Տինքա-

ջերու արին էինք եւ ա զատ. Թէեւ չունինք

ոչսուր, ոչթուր, ոչնի զա կ, Մերբա հերնէլ կանեն

նորանց շանսա տակ:

Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,
Նորանք մարդ չեն, այլ լեռնական վայրենի,
Մերն է ձիրքը, մերն է ուսում ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նորա տէրն արդար,
Հերիք ըննենք ցոյց տանք. . Եւլն:
Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում.
Նոքա մեր վրայ լռիկ արցունք են թափում,
Չեն խնայել, թեւ ու թիկունք կը հանեն,
Ծուտով կը գան կը միանան սուրբ գործին:
Հերիք ըննենք ցոյց տանք. . Եւլն:

Մ՚Նալչեան:

## 51.

### ՈՒՂԵՐՁ ԱՌ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

4/4 — Մէջլաչ.








գոխա հապաշտ պան հզօր եւպաշ տոլլ հա յ րենիք

պանծաս ցիլ Տէրգէ որգ: պանծաս ցլլ Տէր Գէ -

որգ:

52.

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ ԵՐԳԸ.

4/4—Զափաւոր.

Հիմի ե՞ԼԸ ռենքեղ բարք, հի մի ե՞լ

երբմեր թշնա մին խւր սուրն էդԸ բել,

խւրօր հասա կանսու ԺԸ մեր կրծ քին,

ակամջ չիդԸ նում մերլաց ուկո ծին, ասացէք

եղբարք Հայեր, ի՞ նչա նենք, հիմի ե՞ԼԸ ռենք,



ա սացէք եղբարք Հայեր ի՞ նչա նենք,

հիմի ե՞լ լը ռենք:

Հիմի ե՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով հրապուրքով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարքից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից Թագ, եւ խօսք, եւ զէնք,
Հիմի ե՞լ լռենք:

Հիմի ե՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց,
Վա՜յ մեզ, շղթայով կապած գերի ենք.
Հիմի ե՞լ լռենք:

Հիմի ե՞լ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին,
Կուլ տալ է տալիս արտասունք առատ
Աղէխարշ բողոք վարուց ապերատ.
Մեր գլուխը լալու Եփրատ ո՞ւր պտռենք.
Հիմի ե՞լ լռենք:

Հիմի ե՞լ լռենք, երբ մեր թշնամին
Լիրբ գոռոզութեամբ լցրած իւր հոգին,
Արդարութեան ձայնն հանած իւր սրտից,
Արտաքսումէ մեզ մեր բնիկ երկրից,
Պանդուխտ հալածեա՜լ, եղբարք, ո՞ւր գիմենք,
Հիմի ե՞լ լռենք

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Անգութ մեր բերած ծանր զոհերին,
Իւր լիրբ, նըզոված ձեռքը կարկառեց,
Ազգայնութեանս վերջին կապը պատառեց,
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք.
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին,
Արհամարհելով մեր փառքն ազգային,
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնազգեստ գայլին մեզ գլուխ դրաւ.
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք.
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք. մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Ձե՛ն ասիլ, որ Հայք արժանի էին.
Այդ ստրկական անարգ վիճակին,
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք
Մինչեւ ե՞րբ լռենք:

Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ որոց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի եւ սիրտ քաջ,
Ե՛կ անվախ ելնենք թշնամու առա՜ջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք,
Ու այնպէս լռենք:

Ռ., Տ. Գ. Պատկանեան:



## 53.

### ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ՄԵԾ ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

4/4—Մէջակ.




Հիմի է՞լ խօսենք, երբ քաջն Վարդան,
Վաթսուն հազարից, հազարով մնաց,
Մինչ մնացել էր Պարսից լոկ մատեան
Գունդը, մեր վաթսուն հազարի դիմաց,
Երբ մեր վատութեամբ՝ ողջ կորուսել ենք.
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ օտարից շատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,
Մոլրատնով լցինք Դուլին, Արտաշատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն.
Երբ այս ամենը մենք կատարել ենք,
Հիմի է՞լ խօսենք:
Հիմի է՞լ խօսենք, երբ Հրապարակում
Պարսիկը առակ արել է Հային,
Եթէ Ասորու նման աշխարհում
Զ՚կայ մի վատ ազգ, բայց, քան Ասորին,
Է՞լ վատէ Հայը» մենք այս տանում ենք.
Հիմի է՞լ խօսենք:
Հիմի է՞լ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախսումէ անարգ Հացկատակներին,
Մինչ ստրուկ մարդիկ նստան մեր գլխին
Եւ մեզ կարծումեն Հող իրենց ոտքի,
Ու մենք մեզ կոխող ոտքը լիզումենք.
Հիմի է՞լ խօսենք:
Հիմի է՞լ խօսենք, երբ լուսաւորչի
Բնիկ Ժառանգի Թեւերը կտրած,
Անարգ Պարսիկը, այս ու այն Թեմի
Կարգումէ տեսուչ ըստ իւր չար մտաց,
Եւ մենք դեռ՝ «կեցցէ արին» գոռումենք.
Հիմի է՞լ խօսենք:
Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս
Երբ ողջունումենք մենք այդ չքերին,
Որ դրան շուն են եւ մեզ տեսնելիս
Նստ դիմակները դնում երեսին,
Այդպիսիներին դարձեալ պատվումենք.
Հիմի է՞լ խօսենք:



Եւ մեր երեսին մնաց մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ոչ, թէ չենք ուզում Հողից Հող կորչել,
Թշնամու արիւնով մեր թրին ջուր տանք.
Ազգ, եկեղեցի փրկենք ազատենք.
Ապա թէ խօսենք:

Մ. Նալբանդեան:

## 54.

### ԻՄ ԵՐԳԸ.

6/8—Չափաւոր.




Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բսած ծաղկի նման դաշտումը,
Կամաց կամաց տարիները անցնումեն,
Մեզ նորոգած գարուն ամառ դարձնումեն.
Միայն իմ խեղճ կեանքս չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնվումէ միշտ այսօր:
Ասպարիզիս նեղ է ճանբան ու փշոտ
Խեղճութիւնս Համարում են ինձ ամօթ:
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի
«Դա ասումէ իւր կեանքումը դարդ չունի»:
—Ես դարդ ունիմ, դարդս մեծ է ու պէս պէս.

Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես,—
Երբ ես մտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի րոպէ բաղդը ժպտաց ինձ պայծառ:
Հա՛, ասացի, դարձել է իմ անիւը,
Լրացել է իմ վատ բաղդի չար Թիւը:
Ցանկարծ փչեց անտանելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ Մայիսին:
Այսպէս չորցուց իմ Նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը:
Ա՜խ, մօտեցիր օրհասական օր մահուան,
Բեր քու հետը սեւ հող ու Նեղ գերեզման.
Թող՝ սառ լինի իմ Նոր տանը յատակը,
Ծանր քար է վրէս ծածկած վերմակը:
Բայց ա՜խ երբոր կանցնեն ամիս ու տարի,
Կը մամռոտի գերեզմանը այն քարի,
Հետքը անգամ չի մնալու իմ խաչին.
Իմ անունն իմ յիշատակ—կը կորչին,
Բայց կուզէի Թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մնար ամուր, անկործան . . . .
Ես երգեցի երգ. ողորուն եւ անուշ
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ եւ քնքոյշ,
Մի՞ Թէ այնքան անգութ կ'լինի Լետա գետ,
Որ անունս անգամ կանէ նա անհետ:

Ռ. Տ.—Գ. Պատկանեան:



## 55.

### ԱՂՕԹՔ ԵՐԵԿՈՅԵԱՆ.

5/4 — Չափաւոր.

Հրեշ տակ զուար Թուն հը զօր պա հա պան մեր, Որ
զտիւն ող ջոյն ըղ մեզ խնա մե ցեր. Ի մուտս արփ ւոյն
դու լոյս ան ըստ ուերես մեր Ան - մուտ ա րեւ կաց
ցես մեզ յայս գի շեր: Քուն քաղցր ան փորձ
շնոր հեա՛ ի փառս Աս տու ծոյ եւ ըղ ծը նող
հոգ ւոց եւ մարմ նո ց կե ցո՛:

## 56.

### ՀԱՅԱՍՏԱՆ.

3/4 — Ծանր.

Հա յաս տան եր կիր դը րա խ տա վայր,
դու մարդ կայ նոյ ցե ղիս ո ր րան, դու եւ

ընիկ իմ Հայ րե նիք Հա յաս տան, Հա յաս-

5/4 Յորդոր·

տա՛ն, Հա յաս տա ն: Իվեհ ա նունդ

սիրտիմ ո՛հ յոյժ Ոգեւ ո րի ինոր նրա խոյս,

Իվեհ ա նունդ սիրտիմ ո՛հ յոյժ, Ոգեւ ո րի

ինոր նրա խոյսեւ անձկայ ըեացի քեզյու սամի

քեզի, քեզ յոյս իմմի այն եւ իմմի այն:

Հա յաս տան, Հա յաս տան, Հա

յաս տա ն:

Հայաստան անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան
Եգիտ եւ քեւ ապրեցաւ Նոյ,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:
Գետք քաջառաջք ադենաբուղխ,
Զհողդ բարի առնեն յուռթի,
Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,
Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:



Հայաստան ծնող դիւցազանց
Եւ հրաշալեաց հանդիսարան
Քո զեփիւռին քաղցր է հնչիւն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:
Զօր շնչեցին եւ զօրացան,
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Զքեզ, յիշեմ, զքեզ սիրեմ,
Ըզ քեզ, զքեզ, սէր իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Յ. Միրզա—Վանանդեցի:

57.

ԵՐԳ Ի ԴԷՄՍ ՔԱՋԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ.

4/4—Մեղմաւ.

Հայ րե նա սէր Ա րա մեանք,

Զի՞ կայք ի քուն ը նկըղ մեալք,

Բա ցէք զա չսձեր հո գե կան

Տե սէք զօ ըսձեր ժա մա նեալ:

լա լա լալա լա լա, Եւ քեզիշ խա Նըռ -
լո ըոըր տով հե տեւինք խո Նարհա բար

լալա լալա լա Եւ քեզիշ խա Նըռ -
լո ըոըր տով հե տեւինք խո Նարհա բար:

Ո՞ւր են փառք, ձիրք ձեր Նախնեաց
Ո՞ւր են պատիւ վեհ որանց,
Որք զաշխարհս Հայաստանեայց
Լցին փառօք դիւցազանց:
Տրալալա եւայլն:

Ցառաջ մատիք ինձ լըսել
Շառաւիղք քաջին Հայկայ,
Ես կամիմ ձեզ արդ պատմել
Զազգասէր գործ Վարդանայ:
Տրալալա..եւայլն:

Որ զգլուխ իւր կենօք չափ.
Եդ ի փրկանս իւր ազգի
Եւ կնքեալ զայն իւր արեամբ
Եղեւ Փրկիչ հայրենի:
Տրալալա եւայլն:

Սուրբ Խաչ փայլեաց Փրկչական,
Հօգւոց ազգիս Հայկական.



Պահեա՛ զմեզ Տէր Աստուած
Եւ աշխարհիս փորձանաց:
Տրալալա. եւայլն:

Լուսաւորեա՛ց Հայաստան,
Լուսով Խաչին Փրկչական.
Հնչեա՛ աշխարհ ամենայն
Զփող մեծի աւետման:
Տրալալա եւայլն:

Բարձրագլուխ արդ Արարատ,
Թնեալ ծաղկօք զքոյդ գագաթ.
Ազգիս Հայոց խնդութեան,
Լեր դու վկայ յաւիտեան:

Տ. Գ. Պ...

58.

ՀԱՅ—ՄԵՌՆԻՆՔ.

3/4—Չափաւոր.

Հայմեռ նինք, ոչեղ բարք, ոչ, օտար Ներէն
չըկայ յոյս, Մի աչ ուր նեռղ դարձը Նէք յայս յա յն
կոյս, Օտարն ըղձեղ թէեւ սիրէ իւրա բար,
Օ- տարն ահ, միշտէ օա տա ր, Օտարն ահմիշտ
է օ տար. Օտա րը ձեռ միշտ կը դիտէ անգո րով.

Ի՞նչ փոյթ որ դուք թափէք արցունք արիւն նո-
վ, [Մ'վոր] Հայէն Հայուն ցաւերն անհըրդ դար, Ի՞նչ
կըխաբ ուիք անդա դար, Ի՞նչ կըխաբուիք անդա-
դար, Մի դուք ձեր յոյսն մի՛ ացան դէք,
օտա րին, Մի՛ խոր վեր քերդ ցուցը նէք անդու թի-
ն, ար դա յա տանըս կըյու սայք օգ նու թիւ-
ն ձերկը ծաղրէ մերկու թիւն, Մի՛ դուք ձեր-
ր [illegible] յոյսն մի՛ [illegible] ացան դէք օտա րին, Մի՛
խոր վեր քեր դ ցուցը նէք անդու թին,
ար դա [illegible] տանս կըյոս սայք օգնու-
թիւն ձերկը ծաղրէ մերկու թիւն.



Հայ այրինք, եղբարք, մորոնով թեան մէ ջըր,
Հայ կրնքեր է մեզ պատմու թեան էջը.
Հայուն ուժմերը մեզ կրօղըւ նէեր կինք, եղ-
բարք Հայ այ րինք եղ բարք Հայմեռ նինք, Հայ
այրինք, Մեր Հայրենէ այն դիւցա զուն, որա-
զա տու թիւնոր վե ցուց մար զուն, Ու
մեզ վեհ հայ նոյն մրտըն [illegible] թաց եղ-
բարք Հայ այրինք եղ բարք Հայմեռ նենք:

Գիտեմ ձեր բեռը ծանր է, ծանր, ով Հայեր,
Բայց կը կարծէք զայն վերցնելն օտարներ,
Թողէք օտարը, տուէք եղբայր եղբօր ձեռ,
Ու զօրացէք անդ. եթ եւ:

Բաղդը դարձեր է ձեզի դէմ թշնամի,
Մի վհատիք ցոյցուցէք սիրտ Հայերի—
Զէն կերող բաղդ պատերազմ զէն այն քաջի
[illegible] բաղդին դէմ կկռուի:

Ձեր հայրերու [illegible] շղթայք [illegible] սուսերներ
[illegible]
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տկար, հէք,
Ի՞նչ, այն քաջաց որդիք չէք:
Ձէ՞ք դուք որդիք այն դիւցազանց անման,
Որ Հայրենեաց [illegible] փչսեղան[illegible].
Ձեր դուք [illegible] մեծ Հայաս, [illegible]
Են մարդկութեան իսկ պարծանք:
Դուք որ ունիք ձեզ պատմութիւն մ' ազգային
Որոյ վերայ մեծ ազգեր իսկ նախանձին.
Ինչո՞ւ այսօր մոռցած [illegible] ձեր փառաց
Երանի [illegible]
Օ՜ն, ով կզգայ ի սիրտ եռանդ եւ ոգի
Թողու զօտար եւ իւր նախնեաց հետեւի.
Մեր կեանքը հոն է, ուր կրօնից մեր սեղան,
Այն է Հայոց Վառարան:
Եկեղեցիք Հայոց կեանքն [illegible]
Երկինք լեցուն են այն բոցով կենսաձիր.
Որչափ տիրէ մշտայաղթ Խաչ Քրիստոսի
Հայն ալ անոր հետ կապրի:

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] վսեմ արեւմբը:
Դուք [illegible]
Եւ հաւատացէք պիտի [illegible] ձեր [illegible]
[illegible]
[illegible] ձեր ըլլայ զէնք, դրօշակ:



Ո՛չ, հնար չէ, որ կորուի այն ազգը,
Որ հաւատարիմ մնաց Խաչին միշտ ոտքը,
Նորա կեանքը պիտի տեւէ այնչափ դար,
Որչափ կրօնից կեանք յաշխարհ:
Այն վեհ կրօնից եւ ազգութեան անունով,
Հայ եղբարք, ձեռք ձեռքի տուէք հուր սիրով,
Ատելութիւն, քէն մերժուին օ՜ն, ի բաց,
Անիծեցէք զազգատեաց:
Ամենուդ սիրտ՝ զգայուն սէրն Հայրենեաց,
Ամենուդ միտք թող ի յօգուտ համազգեաց,
Ու ձեր յետին եղբօր արցունք ու ցաւ միշտ
Զգացէք իբրեւ ձեր վիշտ:
Օտարին հաց մեզի սնունդ չէ ըսաւ,
Օտարին ջուր, ո՛չ, չմարեր մեր ծարաւ.
Մեզի կենաց տուող եւ մեր պահապան
Է աւազանն Հայկական:
Այն Աւազանն, այն Հայութեան կնքատուն,
Ո՛հ, չուրանամք, եղբա՛րք, յուսովք զանփաղփուն.
Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս
Թող մարի յայն սուրբ կերկէս:
Թո՛ղ ամենքս ալ ընդունի նոյն գերեզման,
Վասն զի նոյն էր ամենուս ալ օրրան.....
Հայ ծնանք մեք, Հայ ապրինք, Հայ եւ մեռնինք,
Օ՜ն, Հայ մնենք եւ յերկինք:

## 59

### ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ.

4/4 — Չափաւոր.

Հայրենեացսի բով վառուած վեհսըր տեր, Ի՞նչը
յապա ղէք ելնել իհան դէս, Ի՞նչը -
յապա ղէք, սիրտերը դիմա նա՛ յ սիրտ
որ ազգա սէ ր ըլլալ կըցան կայ, Տեսնել Հայրենեաց
այսքան բիւրա ղէ տ եւդեռ անտար բեր
ցարդմը նալյա ւէտ: Հեռ ատելու Թեան
ե ւ չարնա խան ձու սէ ր մերնու հո գին
հեռու մըղեմք, հե ռու, Սիրտ սրտի կապ ուած,
Թեւ Թեւի տու ած, Հայրե նեացսի բոյ
Ասպա րէզբաց ուած. օ՛ն



վաղեմք յառաջ խուըբ խաչվըս տա հ, Օ՛ն
իրԹամբյա ռաջ եւանձ նանու էր, Հայրե -
նեացօգ ախն ըլլանք ուխտա նուէր: Հայ
մի վհա տիր, սիրտա՛ռ եւսիրտ տո՛ւր, տկարք զօրա -
նան, քաջքերա խու սին, վատե րըքաց -
ուխն, վատե ըըզատ ուխն, ճշմա րիտհա-
յեր Թո՛ղ յա ռաջ անց նին, խաչ,
սէրն են նշան ճշմա րիտհա յուն, խաչ,
սէրնեն պ ,, ծանք ճշմա րիտհա յուն :
Սի րոյ դրօշ ներ Թող արդ պարզ ուխն,
հաշտու Թեան ձայ ներ, Թող արդ հնչ ուխն




Ս. Գ. Գ. Փափազեան:

## 60·

### ԵՐԳ ՄԵԾԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ.

5/4—Չափաւոր:








ղուլ մեզ, ուժգին հարուած ուժգին հար ուած։

Ռ. Մէլիքէջեան։

## 61.

### ԵՐԳ ՔԱՋԻՆ ՎԱՐԴԱՆԱՑ.

2/4 — Չափաւոր.

Հոյ քնիք մեր-ը՝ քեզ վա ռայի շատակ
է այ սօր, և կայքեղ բարքհայ դիւցա-
զանցներ քողձօ նեմքայ սօր, և կայքեղ-
բարքհայ դիւցա զանցներ քողձօ նեմքայ սօր
Ա յոա յո ներ քողձօ նեմքայ սօր:

Աւարայր դաշտ, ուր նահատակ
Անկան Հայկայ որդիք,
Պահ մի սրտիս նոր աշխուժի
Վերանան հոն մեր միտք:
Այո, այո, վերանան հոն մեր միտք:
Երգեմք եղբարք քաղցրիկ նուագ,
Օրհնեմք քաջացն այն խումբ,



Որ Պարսից դէմ պաշտպանեցին
Ազգն ու հաւատ մեր սուրբ:
Այո, այո, ազգն ու հաւատ մեր սուրբ:
Հոն կտեսնեմք աստուածային
Ու ազգային սուրբ սէր,
Ու միութիւն որով եղեն
Հուժկու եւ վեհ Հայեր:
Այո, այո հուժկու եւ վեհ Հայեր:
Օրհնեալ են միշտ Վարդան, Խորէն,
Արտակ, Տաճատ, Հմայեակ,
Ներսէս, Վահան, Արսէն, Գարեգին
Ու սուրբ Վարդանանք:
Այո, այո, բոլոր սուրբ Վարդանանք:

Խ. Ն.

## 62

### ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԱՂԹԱՄԱՐԱՑ ԾՈՎԱԿԻ ԵԶԵՐՔԻՆ.

4/4 — Չափաւոր.

Ձայն տուր ոսկծո վակլին չու ըլ ռու մեօ
Ողբա կիթիւ նելքկա մես դժբաղ դիւ,
Ճար ժե ցեքզե փիւռա մ քը վէտ




Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկզբից մինչ այժմ, խնդրեմ ինձ ասա՛,
Միթէ՞ միշտ այսպէս կմնայ Հայաստան
Փշալից անապատ երբեմն բուրաստան:
Միթէ՞ միշտ այդպէս ազգը խղճալի
Կլինի ծառայ օտար իշխանի,
Միթէ՞ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է Հայն եւ Հայի որդին:
Արդեօ՞ք գալու է մի օր ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ·
Եւ ամեն կողմից պանդուխտ Հայազգիք
Դիմել դէպ իւրեանց սիրուն հայրենիք:
Դժուար այդ, միայն, Տէսուչդ վերին,
Կենդանացրու Հայութեան հոգին,
Ծագիր նոցա դու քո լոյս գիտութեան,
Որով երբ էակք նոքա բանական,
Կճանաչեն մարդուս կեանքի խորհուրդը,
Կը լինի գործովք Տիրոջ փառաբան:

Յ. Մելիք—Յակոբեան:



63.

## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ.

5/4—Դանդ.




Բայց նոքա՛ միշտ յեղյեղուկ,
Պղտոր ջրով եզերքին.
Դարիւ դարիւ խփելով
Փախչում էին լալագին:
Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ,
Գար չես բռնում մանկական.
Դու դեռ ծովը չը հասած,
Սրգաւոր ես ինձ նման:
Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ հպարտ աչերից.
Ինչո՞ւ արագ փախչումես
Այդ հարազատ ափերից:
Մի՛ պղտորիր յատակըդ
Հանդարտ հոսէ խայտալով
Մանկութիւնը՛ քո կարճ է,
Շուտ կը հասնիս դէպ ի ծով:

Վարդի թփեր թող բուսնին
 Քու հիւրընկալ ափի մօտ,
 Սոխակները նոցա մէջ
 Երգեն մինչեւ առաւօտ:
Մշտադալար ուռիներ,
 Սառ ծոցը մէջ քու ջրին,
 Ճըկուն ոստն ու տերեւ,
 Թող բաց անեն տապ օրին:
Ափերիդ մօտ երգելու
 Հովիւք թող գան համարձակ.
 Գառն ու ուլը քու վճիտ
 Ջուրը մտնեն միշտ արձակ:
Մէջքը ուռցուց Արաքսը,
 Փրփուր հանեց իւր տակից.
 Ամպի նման գոռալով
 Էսպէս խօսեց յատակից:
«Խիղճ խ, անմիտ պատանի.
 Նիրհս ինչու̃ գարեւոր
 Վրդովում ես, նորոգում
 Իմ ցաւերս բիւրաւոր։
«Սիրելիի մահից յետ,
 Ե՞րբ ես տեսել, որ այրին
 Ոտքից ցգլուխ պճնուի
 Իւր զարդերով թանկագին..եայն:

Ռ. Տ—Գ. Պատկանեան:



64.

ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՑ ԵՐԳ.

4/4—Չափաւոր:




Մեր հայրենիք շղթաներով
 Այսքան տարի կապկապած,
 Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
 Պիտի լինի ազատուած:
Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
 Որ իմ ձեռքով գործեցի,
 Գիշերները ես քուն չեղայ,
 Արտասուքով լուացի:
Նայի՛ր նորան երեք գունով,
 Նուիրական մեր նշան,
 Թող փողփողի թշնամու դէմ,
 Թող կործանուի Աւստրիան:
Ինչքան կլին մարդ, մի թոյլ էակ
 Պատերազմի գործերում,
 Կարէ օգնել իւր եղբօրը
 Ջանց չարեցի քո սիրուն:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհվի: »

Մ. Նալբանդեան:

65.

ՈՐՍ ԱՐՇԱԿԱՑ.

2/4—Մէջլաէ:




Տիրասէր իշխաններ
Պատրաստ եղէք քաջօրէն,
Արքայիս դառն ցաւեր
Թող անդարձ ցրուեն:
Հնչեցէք փողերը
Անուշաձայն երգերով,



Ցորս Արշակ այս օրը
Կամի եւանել:
Տրոփ ձիոց մեր հնչիւն
Ի դաշտն Պարսկաստանի
Ցուցանել Հայկազանց
Եռանդն ու հոգին:
Ցառա՜ջ դուք ընթացէք,
Ով քաջազունք տալով տրոփ,
Արձագանք ձեր ոտից
Հնչեսցին տրոփ տրոփ:

Խ. Գ.

66.

ԼԵՒՈՆ Զ. ԲԱՆՏԻ ՄԷՋ.

4/4 Չափաւոր.






Ո՛հ, Հայրենիք իմ անտերունչ ցաւոց մէջ հեծէ,
ցաւոց մէջ հեծէ.
Մի՞ թէ սիրտս ապառաժ է, որ չը հառաչէ,
որ չը հառաչէ,
Իւր հայրենիք, պալատ, զինուորք ինչպէս չյիշէ:
ինչպէս չյիշէ
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս Փարի՛զ քեզ պատմեմ,
Փարի՛զ քեզ պատմեմ.
Դու մի՛ լինիր ինծ աւերակ քեզի կը դիմեմ,
օգնութիւն խնդրեմ,
գթութիւն խնդրեմ:
Ամիսս է դար, օրըս տարի, ո՜հ ժամերս ամիս,
ո՜հ, ժամերս ամիս.
Սէր Կիլիկիոյ անտէր գահոյս լալով կոչէ զիս.
Եգիպտացիք ազգ խուժադուժ քանդեն Հայրենիքս:



Էս իմ ցաւերս էս իմ վշտերս Լոնդօն քեզ պատմեմ,
Դու մի՛ լինիր ինծ աւերակ քեզի կը դիմեմ,
օգնութիւն խնդրեմ,
գթութիւն խնդրեմ:

Մէջ վանդակիս փակեալ Լեւոն սէգ առիւծն Հայոց,
սէգ առիւծն Հայոց.
Բացէ՛ք վանդակս Եւրոպացիք, տեսէ՛ք զոյժն Հայոց,
տեսէ՛ք զոյժն Հայոց.
Վերջին ոյժն իմ՝ վերջին ճիւղ իմՌուբինեան գահուն,
Լուսինեան գահուն:
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս է՞լ ո՞ւմ ես պատմեմ
է՞լ ո՞ւմ ես պատմեմ,
Փարիզ, Լոնդօն աւերակ են ի՛զուր մորմոքեմ,
օգնութիւն խնդրեմ,
գթութիւն խնդրեմ:

Վերջին կըտակս ձեզ ո՛վ Հայեր, սիրով միացէ՛ք,
հոգւով միացէ՛ք,
Ձեր միութեան եւ սիրոյ մէջ սատար խնդրեցէ՛ք,
փրկիչ խնդրեցէ՛ք:

Էլ ոչ ոքից չըկայ ձեզ ճար, դուք ձեզ օգնեցէ՛ք,
դուք ձեզ փրկեցէ՛ք:
Էս իմ ցաւերս, էս իմ վշտերս ձեզ պատմեմ Հայեր,
ձեզ պատմեմ Հայեր,
Աշխարհ ձեզի աւերակ է թէ դուք չունիք սէր
թէ դուք չունիք սէր:

Ո՛հ, բաց արէք ձեր հին վէրքեր, դուք էք ձեզ խոցած,
դուք էք ձեզ խոցած,

Հայն ի Հայոց, ոչ յօտարաց, է միշտ յաղթուած,
է միշտ յաղթուած։
Քէն եւ նախանձ Հայոց ազգի տուն տեղն է քանդած,
տուն տեղն է քանդած:
Դուք ձեր վէրքեր, դուք ձեր խոցեր սիրով բուժեցէք,
սիրով բուժեցէք,
Աշխարհ ձեզի աւերակ է թէ զիրար չսիրեք
թէ Մասիս չսիրէք
թէ Կրօն չսիրէք:

Ս. Գ–Ն––Նէ։

## 67.

### ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ.

4/4—Չափաւոր.




Մեծ ծովէր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը:
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ
Մինը խիստ տգեղ միւսը գեղեցիկ:



Մի օր տգեղը ասաց միւսին,
«Երթանք ծովի ափ, քոյրիկ միասին»:
Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը ետնից՝ ոխ պահած սրտում:
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իւր սիրուն քրոջ գլորեց նա ցած:
Կանչեց կիսամեռ սիրունը ջրից
«Քոյրի՛կ, իմ քոյրի՛կ, փրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգեւէ ինձ կեանք»....
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:
«Քոյրի՛կ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
Կուտամ քեզ ոսկի պսակ պատուական:»
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:
«Քոյրի՛կ, մի՛ թողնիլ դու ինձ անտերունջ
Քեզ սիրուն փեսայս կտամ անտրտունջ:»
Տգեղի սիրտը դարձել էր ժեռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար:
Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան.
Ջըրիցը հանեց դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ:
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան
Լացեց ու առաւ դրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Զօրացուց նորա մարմնու դիփ հիւթը.
Գեղեցիկ տաւիղ, շինեց ոսկերից,

Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից:
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գնաց արքունիք՝ տաւիղը ձեռքին:
Երբ մտաւ դահլիճ շքեղ զարդարած,
Տեսաւ տղեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը լարերին խփեց,
Հիւրերի առաջ քաղցրաձայն երգեց:
«Հնչէ՛ իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,
Հարազատ քոյրս խլեց իմ պսակ.
«Լսէ՛ իմ ծնող, լսէ՛ սիրական,
Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
Լսէ՛ ժողովուրդ, լսէ՛ սիրական
Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով:
Միւս օր դահլիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին:
Հուրը պլպլած, աղջիկը կանչեց,
«Իմ մեղաց համար, Աստուած ինձ պատժեց:»

Ռ. Տ—Գ. Պատկանեան:

68.

МАЙРЕНИ ЛЕЗВУ

4/4—Չափաւոր.






Առաջին դու խօսք՝ ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած.
Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչումես իմ մէջ դու միշտ անդադար:
Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէս իմ մէջ հնչումես դու.
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգւով հայանալ.
Ասես թէ՝ ահա՛ կանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից:
Հնչիր ու՛ հնչիր այժմ եւ յաւիտեան
Մայրենի լեզու, բարբառ սիրական.
Արի՛ բարձրացիր հնութեան փոշուց,
Դու իմ Հայ լեզու, մոռացած վաղուց,
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածքներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:
Ամեն տեղ փչումէ Աստուծոյ շունչը,
Սուրբ է այո՛ միւս, այլ ձեւ ու ոճը.
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր,
Իմ երանական մտածութիւնքը—
Ապա կխօսեմ իմ մօրս խօսքը:

Ս. Նազարեան:

## 69.

### ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ.

2/4—Չոփառը.



Մինչ դեռ յու սով խայ տայընու Թիւն,
※ Եւ ի գա ւառն իմ Հայրե նի ,



յետ դառ նա շունչ ձը մերայ նոյն,
գե ղա ծի ծաղ դառ նայգա րուն.



Մինչ բոյրի բոյր փըլթ Թինծաղ կունք եւ ճռւռ-
Ի քեզես դարձ առ նեմ յայն ժամ, ո՛վ ցանկա-



ղիննո բեկծիծ ռունք, ի քեզ ե ս դարձ
ւիդիմ Հայաս տա ն:



առ նեմ յայն ժամ Հայաս տա ն :

Ո՛չ Հելուետեան ինձ դաշտավայրք
Եւ կամ զուարթ մարգագետինք
Ո՛չ քան ըղձեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկինք:
Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Քոյովդ յար տապիմ անձկով,
Ի խանձարուրդ իմոց կենաց.
Ո՛վ Հայաստան առնում ես դարձ:
Գայցեն աւուրք ուր մանկութեան



Անկցի տիոցս իմ գեղ դալար.
Եւ յինէն խոյս տացեն վայելք.
Ուր կենաց Թեթեւ ի գարշապար:
Ուր Հէք մուսայն մատն ի յերեր
Մոռանայցէ երգել զսէր,
Զնինջ ի ծոցդ առնեմ յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:

Մ. Պէշիկթաշլեան:

## 70.

### ԱՐԱՄ ԵՐԳ.

3/4—Մէջլսի.



Մերքաշ Հա յոց զօրու Թիւն, Վերկա ցէք ա-



սաց Արամ, Զառա ջեաւ բա ցէքնը շան,



Գնա՛նք Հայ լեզուն տարա ծե՛նք, Ո՛վ Ա րամ, Ա րամ,



Ա րա՛մ:

Նիւքար սորուկ Ասորին,
Բարբառ գոչէ աՀագին.
Զգլուխ յաշտարակ մեխեցէք
Որ յերկնից սորուի Հայերէն:
Ո՛չ, Արամ, Արա՛մ, Արա՛մ:

Ցորդան տո՛ւք զօրք, ո՜ն, յորդան
Դէպ ի կողմն Արեւմտեան.
Պայապէս Քաղեայ Տիտան,
Դի՛ք զի տապաստ ի դամբան,
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:
Ցորդան տո՛ւք, ո՜ն, զօրք յորդան
Տեարք լայնալիճ աղեղան
Քնքուշախօս ամբոխին
Տալ ըզլեզու Հայկական:
Ո՛վ Արամ, Արամ, Արամ:
Ո՛վ չգիտէ Հայերէն,
Ո՛չ ճանաչէ նա զօրէն,
Որ բանիւ Հայոց արար
Այս մեծ աշխարհ մեզ համար:
Ո՛հ, Արամ, Արամ, Արամ:

Մուշէ Մուշեղեան:

71.

## ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ.

4/4—Մեջաւէ.

Մեզնոր արեւ ծագէ , բացուի լոյսըս ցավա ռ.
Զօրա վարքաջ Վարդա ն, դիմենք յառաջ խաւ ր,

Մեզա ռաջնորդ սուրբ երեցներ ունինք խաչու խաչվա ռ,
Դիմենք բանալ կենաց շաւիղ Հայեր, մերա ռաջնե ր.



Հարսա նեացհար սանեա ց սուրբ հանդի սարան,

Մեզ նոր ուխտկան չումէ լինել

փրկիչ կրօնի փրկիչհայրե նեաց: Հա յոց ծաղ կունքթոռ

մին, Հայ ե Թերքպըղծ ուլին մեզ նից ցօղխըն -

կոց բուրմունք կամի ն: Զէնքեր պատե նիցմէ ջ

եռգան կրակ դարձա ն : Պարսից արեամբ հանգու ցանել

խնդրել զբազուկ քաջա ց նըժոյգներխր խնջա ն

զերկիր փորեն տոփե ն, դիմենք յԱրտազ դաշտ,

դիմենք յԱւա րայր մերհայ բենկք, մերազ գուլթին,

կըրօ ն, գալժո ղովել խոսուրբ տօն եւհրա ւիրել

զամեն Հայս:

## 72.

### ԱՆՈՒՐՋՔ.

4/4—Մնջուկ.



Ցամ սավերջն Ապ րի լի զպատու հանս բա ցի,



զձիւ նաթաղ դաշ տորայս ծաղ կազարդ տե սի:

Արտասունք եռանդունք զայտս իմ այրեցին
Զիմ անդարձ գերութիւն յուշ իմ՝ ո՜հ, ածին:
Լեղուապէս դառնացան վէրք վհատ հոգւոյս,
Թմրեցան զգայարանքս հատան ելք շնչոյս.
Ափսո՜ս ինձ, ասացի, բիւր անգամ յայն օր,
Նատ անէծս թափեցի ի ծննդեանս վատ օր:
Մաշեցայ, թօշնեցայ, մոխ խոր ի քուն,
Զչար կս կիծ հէգ գերւոյս արկ ի ծով անհուն:
Դշխոյն մեծ անմահից եւ ինձ յայց տեսլեամբ,
Որպէս թէ ի փոսոյ զիս եւյծ ձեռամբ:
Աներկմիտ մօտ մատեայ ի համբոյր ոտին,
Գերբնապէս սքանչելեօք զիս ազատողին:
Բամբ ձայնեղ թռչնակաց ճոխ դայլայլեցին,
Կենսածին Տիրամօրն փառս վերերգեցին:
Երանի՜ ասացէք, կարմրացայտ վարդիս,
Քաջ աղերս տուք նմա ի գով պաշտպանիս:
Ուա՞ղ իմ նեղասիրտ կարճամիտ լալոյս,
Զիմ՞րդ զիս կարծեցի կորուսեալ անյոյս:
Նախատինք իմ նեղ չաց նետք եղեն ինքեանց,
Նանրացան դաւք նոցա, անկան յիւրեանց ցանց:



Ցաւագնեալք՝ օրհնեցէք զանուն Տեառն յաւէտ,
Դիք գլոյս ձեր յօգնութիւն Խաչին փրկաւէտ:

Յ. Վ. Ալամդարեան:

## 73.

### ՍՈՒԳ ԴՍՏԵՐ ՑԵՓԹԱՑԵԱՑ.

2/4—Չափաւոր.—Ծանր.



Ցա ռա ւօ տ կե -
Ցա րշա լո յս ա -



Նաց կուսա նիս, Խոր շակ մահու անս
ւուրց անմե ղիս,



տա րա ծի. Ա՜խ, լոյս ա չացս



պա կա սի:

Ա՜յ ծանօթ լերինք եւ հովիտք,
Ա՜յ պայծառ դաշտ ծաղկափթիթք,
Ահա՛ ի ձէնջ հրաժարիմ
Փութով եդայց ի շիրիմ:
Լացէք զիս, ո՜վ անտառք բոլորք
Լացէք հարք, մարք, եղբարք եւ քորք,

Զիս փոյթ զենցէ սուր ուխտին
Յօդուածքս այժմէն սարսափին:
  Արիւն իմ է գին փրկութեան,
Դիցամոլ ազգին Իսրայէլեան,
Մեղապարտքն ազատ մնան,
Անմեղ կեանք իմ չքանան:
  Մայր իմ, ա՜խ, դու մի՛ շատ ցաւիր,
Հօրս ուխտին ընաւ մի՛ ներհակիր.
Յաստուած բարձրեալ զյոյս քո դի՛ր,
Բե՛ր զզարդս իմ, մի՛ ողբիր:
  Դուք, դստերք տոհմին Յակոբեան,
Շուրջ, զինեւ կացէք միաբան.
Երգեցէք զերգս հարսնութեան,
Միշտ տօնեցէք զիմ վախճան:
  Աստուած մեծ՝ փառք Իսրայէլի,
Ընկա՛լ զիս իբր զհոտ կընդրկի,
Իբրեւ զզոհն Աբէլի
Իբրեւ զորդին Սառրայի:
Բաբունեաց վճիռ համաձայն
Ո՛չ, կարաց տալ մահուս խափան.
Լե՛ր դու, Տէր իմ, օգնական.
Դու հեշտ արա զիմ վախճան:
  Եղկելոյս ծնողք ցաւալի
Մնասցեն առանց զաւակի
Տէր, տո՛ւր, նոցա սիրտ արի,
Մեղմեա՛ զմորմոք դառն վշտի:
  Աւանի՛կ՝ երամք հրեշտակաց
Առ երկնիւք կան թեւատարած
Զիս հրաւիրեն յԱդին բաց,



Զիս կոչեն հարսն Հօր փառաց:
  Նկարէն քօղն իմ հարսնութեան,
Փոխարկի ի տապան թաղման,
Իմ պճնազարդ հարսնարան
Եղեւ այս խոր գերեզման:
  Յուցէք ինձ մահու գործին
Զսուր զէն զոհիս արժանի
Արդ՝ ողջ լերուք, սիրելիք,
Օրհնեալ է Տէր, պիղծ են դիք:

Յ. Վ. Ալամդարեան:

## 74.

### ՕՐՕՐՔ ՀԱՅԿԱԿԱՆ.

4/4—Տանդ.—Ձախաւոր.




Ննջեա՛, Ննջեա՛ անուշ զաւակ
Շուտ մեծացիր եւ մարդ դառ.

Լեր պիտանի Հայրենիքիդ
Հայրենիքիդ քո Թշուառ՝ օր օր եւյն:
Գիտե՞ս արդեօք ով էր պապդ եւ ինչ գործեր նա արաւ,
Նա Վարդանն էր, որ իւր գործքով Հայրենիքին փառք բերաւ:
Քո անունն էլ նոյնպէս Վարդան, քաջ Վարդանին նմանիր.
Նորա տուած օրինակով Հայրենիքիդ ծառայիր:
Գիտացիր որ ամենայն մարդ պարտական է իւր ազգին
Սիրել օգնել եւ Թէ պէտքէ Հայրենիքիդ զոհ լինել։
Դէ՜հ մեծացիր ու քաջացիր, Ազգիդ վրա մտածիր
Ձեռքէդ եկած ամեն բարիք նորա համար մի խնայիր:

Կ. Մաճկոնեան։

## 75.

### ՊԱՆԴԽՏԻ ՈՂՋՈՅՆԸ։

$2/4$ — Չափաւոր։




Ողջոյն տուէք Աւարայրին
Արիւնաներկ սուրբ վայրերուն,



Ողջոյն տուէք տխուր լուսնին,
Որ լացնէ սեւ Նիրիմներուն:
Ողջոյն տուէք պանդուխտ Հայուն,
Թշուառ Հայուն, չուառ Հայուն:
Ո՜հ, ձեռք տուէք, ո՜հ, սիրտ տուէք
Հոգի տուէք անկեալ Հայուն:
Ողջոյն տուէք ոլոր մոլոր
Մոլոր, վազող գետակներուն,
Ողջոյն տուէք պղտոր բոլոր
Աղի լեղի աղբիւրներուն:
Ողջոյն տուէք ի հող եղած
Արքայական պալատներուն,
Ողջոյն տուէք գետնատարած
Սրբոց ամբիծ մատուռներուն:
Ողջոյն տուէք դուք խումբ ի խումբ
Որ կան Թաղած հոգիներուն.
Ուր Հայ սոխակք Թռմբէ ի Թումբ
Կեանք կը խնդրեն դեռ շատերուն:
Ողջոյն տուէք Հայ մուսային,
Որ լայ զփառս իւր հաւերու,
Ողջոյն տուէք իմ քնարին,
Որ Հայկայ տանն է ողբերգու։

## 76.

### ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ։

$4/4$ — Չափաւոր.



մերդիւ ցա ղանց գե րե ղ ման.

Ող ջոյն Հա յոց Թա գու հի՜ հ, ո՜ հ.

պսակեալ փա ռօք Հա յ րե նի:

Երկինք զրկէ քեզ հրեշտակ,
Բիւր վարդք ծըլլին ոտքին տակ.
Իւր մէկ Նայուածքն երկնագեղ,
Քու արտասուաց ըլլան դեղ:
Ո՜հ, ինչ անուշ Նուագներ,
Պիտի հնչեն՝ սախալներ
Երբ քու ճակատդ պսակէ,
Ծաղկէօնեան դափնիներ:
Մանուկն յօրրոց կը խայտայ
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ,
Երբ որ Նշոյլք կը ժպտին
Հայ աստեղաց Նորածին:
Ո՜հ, ջերմացդ քով ալ հանգչի
Անմահութեան վեհ ոգի,
Մինչ զուարթունք ի բարձանց,
Պսակս սփռեն Հայկազանց:
Փափուկ մատունքդ թող դըրոշմեն,
Այն տառերով ոսկեղէն,
Մեր սրտին մէջ «սէր եւ լոյս».
Մեր հոգւոյն մէջ «կեանք եւ յոյս»:



Քու վշտերուդ փոխանակ,
Երկինք կանգնեց յաղթանակ.
Քու վէրքերուդ ալ դարման
Քեզի օրէնք շնորհեցան:

Եփր. Յ. Արփաղէան:

---

## 77.

### ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ.

4/4—Չափաւոր:

Ո՛վ Տէր Աստ ուած, լուր մեր բար բառ,

յուղղեալ սըր տէ միշտ վըշ տա հար.

Քու Թա՛ գը Թա՛ Հա յոց Թըշ ուառ

մի յոտա րաց լի ցինա ւար. Նա յեա՛ց տըխուր

ա ւերա կաց մե ր հարց ա ն շուք

ը քեալքեր մաց: Ա՜ խ, Հայաս տան

մայր. ոգա զգեաց, ի բիւր հա ռաչս

կո ծէ ի լաց: Ուր հա յորեար

տըք նինպան դուխտ, Ո՜հ, ընդ տարվայր

բա զ մակա րոտ: Զու նի ն պաշտ պան

մերձ ի կո րուստ, ի վտանգս կը րեն

հար ուածսան գութ, Տո՛ւր շունչ քո յդ հայ

ո ր դւոցհա մա յն, ի չէք դարձ ցին.

վա՛շ ոսոխք չար եւի կրօ ն սուրը

Հայք, Հայաս տանկեց ցե՛ն յա ւէրժ, կաց ցե՛ն պայ-

ծառ, կաց ցենպայ ծառ:

Վ. Վ. Մանկունի:



78.

ՆՈՒԷՐ ՑԱՒՈՒՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՑՄԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ.

4/4 — Միջակ:

Ո՜հ, գի՛շըք նաղզգաց մանցի վառ յու-

գինայ սօրհո գեպա րար, Հրա պոյրեի մի

տսի սիրտսկայ տառ եւ յոր դեն իղձք ի հա յո-

3/4 — Յորդոր.

րեար: Ույայս հան դէս վեհեւ շը քեղ

մինչպստ դաշ տին յօրհներ գոգեղ գեղ, Նաւա կա տիս

տանսփա ռա հեղ գուշա կէ քաջ յու սոց ի

4/4 — Միջակ.

գեղ: Ո՛չ այսհան դէս քաղցր ա ւետ եաց

հըն չէ ըզձայն հա յաստա նեայց, հար սինլու սոյ տանս

հը ընուագ գեաց ի ձայնհրա ւէր

47

ի վայր դա լարեաց՝ յո րում ա հա

ի թիւս ու խ տից հան դի սա կ ցեալ

կա րօտա լից: Նա եւ ո գի սուրբ Հա յազ նից

վե րա սլա նան մաղ թանք սըր տից:

Պա հեա Աստ ուածզայս նորա

Ծաղ կո գուտի փառաշա յութեան յար պայ ծա ռա-

ցա Տէր բարե րա ր ար դիւնս առօ-

ք ե ւ պերճա բար: Եւ ընդսը մին միշտպան ծանցի

խփառա ւոր յիշատա կի անուն սուրբն վեհհիմ նադրի

ՏէրՏէր Գէորգ Հայրա պետի՝ անուն սուրբն վեհհիմ նադրի

Տէր Տէր Գէ որգ Հայ րա պե տի:



Փառք միշտ ձեռնն նուիրական
Որ զայս կանգնեաց զճեմարան,
Եւ խանդակաթ յիղձս եռանդեան
Բանայ զդուռնս գործել իջան:
Սա է Երկիր սուրբ բանաւոր
Ո՛չ աւետեաց մեղրածոր
Եւ ոչ կաթին առակաւոր,
Այլ փրկութեանն հոգեւոր:
Ո՛հ զի վսեմ լայն ասպարէզ
Հարթեաց սովաւ յուսմունս պէս պէս
Որ հովուեսցէ յայս սուրբ կըրկէս
Ամենակալ ազգն անմերձ:
Սա սրբեսցէ զեռանդն սուրբ հարց
Մեծ Գրիգորի եւ Թարգմանչաց,
Սահակ, Մեսրովբ եւ հետեւողաց
Ի սիրտս համայն ժառանգաց:

Վ. Վ. Մանկունի.

## 79.

### «ՅԱՌԱՋ» ՀԱՅԿԱԿԱՆ.

4/4—Մեղմ.

Որ դիքքաջ Հայ կայա րիք ընդա ռաջ,

Տե սէքձեր ար քայնիւր դա հըն բաղ մած,

խրա խոյսկար դա ցէքչայ դօ բականք քաշք ,

սուր իձեռն առ նուլյաղ թել Ալա նաց:

Ձեռն ի ձեռն տուէք գնանք պատերազմ,
Վանենք թշնամեաց, ջնջենք մեր երկրից.
Հայ անուան համար լինենք մենք միշտ կազմ.
Մեռնել քաջաբար չընկնել մեծ փառքից:

Արտաշէս արքայն փառօք պանծացած,
Մեզ է առաջնորդ, դէն ձգենք երկիւղ.
Հայաստան կանչենք կուրծքերս դէմ դրած,
Բառնամք մեր երկրից տիրած մառախուղ:

Ուրեմն կեցցէ տուն քաջ Արտաշխին,
Որ նա վանեց քաջ Ալանաց ազգին,
Ազատեց երկիրը օտար ցեղերից
Կանգնեց անմահ արձան մեր առաջին:

«Արտաշէս և Սաթենիկ» Ողբերգութիւնից:

## 80.

## ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ.

4/4 — Զափաւոր.

Ո՞րն է աշխարհն Հայաս տան, Մի՞թէ սա է Պարսկաս տան,

Ո րե պատկերն է Սողոմ եւ Գօ մոր



ըն տա նիկեանքն է Բաբե լոնեան խմոր:

Զէ՛, չէ՛ չէ՛, չէ՛, սխալ է, մերաշ խարհն այլ է, մերաշխարհն

այլ է .

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մի՞թէ սա է Յունաստան,
Որ իւր բանուեթեամբ գերել է Աշխարհ,
Ազգի ճիգն ու ջանքն յաւիտեան կործան:
Չէ՛ չէ՛ .. եւայլն:

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մի՞թէ սա է Տաճկաստան,
Ուր իրաւունքից կանայքն են զրկուած
Կանանոցի մէջ կենդանի թաղուած:
Չէ՛, չէ.... եւայլն:

Ո՞րն է աշխարհն Հայաստան.
Մի՞թէ՞ սա է Ֆրանգստան,
Որ իւր ճոխ զգեստուք տիրել է աշխարհ,
Լուսաւորութեամբ առաջինն է նա:
Չէ՛, չէ՛ չէ՛...եւայլն:

Ո՞րն է աշխարհն Հայաստան,
Ահա՛ սա է Հայաստան,
Որ իւր քաջութեամբ հաւատն ու կրօն.
Պահպանել է մինչեւ ի ցայսօր:
Հա, հա՛, հա՛, հա, հա՛ ճիշտ է,
Մեր աշխարհն այդ է, մեր աշխարհն այդ է:

Մ. Փ.

## 81·

### ՄԱՂԹԱՆՔ.

$^4/_4$—Չափաւոր — Դ ձանը·




Գ. Ա.

## 82·

### ՀԱՅ ԱՇԽԱՐՀ.

$^4/_4$—Չափաւոր:—Օ ձանը·









Տիգրան, Միհրդատ նաեւ քաջ Վարդան
Քո գու թշնամեաց ի՛նչպէս դէմ կենան,
Երբ Փառնակ, Վասակ, մատնիչ Մեհրուժան
Իրենց Հայրենեաց լինին դաւաճան:

$^2/_4$—Եղչալ·



իրա ւամէժա ռանգե ցին · Մեզ օ րինակ

մերքաջնախ նիքը՛ մեզպա հապան մերսուրբհա ւատը

Նախնեաց փառքին Նախան ձաւոր ժառան գէմեր

քաջ Վար դան մեծսպա րապետ հայրե նասէր

սուրբհա ւատոյ վեհպաշտ պան՛ Նրանցքա ջուլթեան

օրի նակը պատե րազմի խառնուած քումը

*ff* մեզսիրտ տուեց մենքյաղ թեցինք միշտան պակաս

փառքնո րան *ff* միշտան պակաս փառքնո րա ն :



83·

ԵՐԳ ՎԱՀԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆԻ·

4/4 — Մէջ․․․

Որ դէք հայ կայ ո րդէք փա ռաց

զար թէք կո չէ զձե զԱս տուած, տե սէք Մա նեաց

ի գլուխ ա զատ ըզ բաղդ հա յոց նո րա հրաշ·

աչք ձեր ի դոյն լու սաս ցին բոց· սիրտք վա ռեսցին

սիրտք հա յոց· Եւ մը խես ցին կուռ բա զուկք

Քա նի հը նոց դե ղա ր զուք՛ Յա ռա տու թեան

աս պա րէզ թա փել շան թի ս սաստ կա վրէժ :

Օ՛ն փողեցէք՛ ելէք ի գորդ՛
Աստուած է ձեր առաջնորդ·
Լուսյք՛ փառք ձեզ կարդան հրաւէրք՛
Տեսէք անգուստ հարց ստուերք·
Անվրէժք առ ձեզ կառկառեն ձեռս:
Որդէք՝ խուլ հարցդ էք դաշնաւոր

Արի՛ք ընդ ձեզ դաշնաւոր
Արդարութիւնն է հզօր,
Եւ զլայնալիճն առեալ Հայկ,
Էջ քաջորդւոցն ի բանակ:
Օ՛ն, … ոյք ի Հայս մտին զերծ Բէլ,
Ուսան սա վայր է անել
Ըզսուր մահու ա՛ծ շուրջ պահպան
Տէր յնդեմեան Հայաստան.
Սաէ. Ո՛ զսոյն կոխէ սահմանս,
Մի՛ ողջ դարձցի յետն ի վանս
Որ վասն Հայոց ա՛ծ երկաթ
Ինք պնդեսցի յայն կաշկանդ
Եւ զոր կոխել գայր անահ
Համբուրեսցէ թոքամահ:
Արի՛ք իմ՛ քաջք որդիք Հայկայ
Վրիժուց ձեր օր հասեալ կայ.
Երկինք զինեալ են՛ դատել հուրբ
Պղծողսն զձեր երկիր սուրբ
Թէ զձեր խնդրեն արդ տէգ, աղեղ:
Տո՛ւք, թափեցէ՛ք կարկտի տեղ,
Ցասումն արդար է ձեր Հայք,
Անցեալ գոչէ գոչէ, մի՛ դլայք.
Ազատութեան օր սա ձեր
Նոցա՛ անտիւն հաս գիշեր:
Արի՛ք, ծաւալ դուք բարձր Հայեր,
Քրիստոսապսակ ըզ դրօշ ձեր
Զէնք ուր Փրկչին նշան կայ կուռ
Մի եւս անկցի կոր յաթուր,
Օ՜ն զաջդ ի վեր ձըգէք յերկին



Երդումն տուք ահագին:
Մի՛ ձեռքդ իջցեն՛ մի սուսեր,
Դարձցի հանգչել ի յաղդեր,
Ցորչափ դեռ շիթ մի վերջին
Մնայ յերակս ոսոխին:
Հապա՛ իմ՛ քաջք, օ՛ն անդր յառաջ,
Ձեզ հովանի կայ սուրբ խաչ
Բթեսցին յայն տէգք եւ փըքին
Զոր լարեսցէ թշնամին,
Վա՜չ, ոյց հասին փառք ի վսեմ:
Թռչիլ գահէդ յերկնից սեմ,
Ահեակ ոտամբ գլուխս ոսոխս
Թոպել գլորել ի դժոխս,
Մուծանել զաջն յերկնից սահման
Ազատ թողեալ ըզՀայաստան:

Խորէն Վարդապետ:

84·

ԱԶԳԱՏԵՍԱՑՑՔ.

4/4—Միջակ.



ու բանայք սէր եւ ըղ նո բունխընդ -
րէ քա ւեր. եր կլինք ըղ ձեզգա տա պար տեն
եւ Հայրե նի ք խո տին մեր ժին
ե լէքի մէնջ ի բացգը նայք, անէծ ոյցչէն ճշմա րիտ
Հայքզի՞ կայք ի մէնջ ի բաց ի բաց գը նայք
անէծք ոյցչէն ճշմա րիտ Հայք, ա նէծք
ոյց չենճշ մա րիտ Հայք:

Ի ձեր ճակատ Նըսեմաստուե՛ր
Ըզգաստակնիք տանիք դուք ձեր.
Ի ձէնջ, ո՛վ դուք որդիք Քամայ,
Ամենայն ազգ գարշի սոսկայ.
Ասեն. Դա զծնող իւր անարգու,
Վ՜տ, Հայրենեացն է մատընտու:
Ելէք ի մէնջ.... եւայլն:
Օ՛ն անդր...ընդ մեղ չի՛ք ձեր բաժին.
Խաւար ձեզ ալն ունի յետին.
Մեր Հայկն է Հայր. Գրիգոր՝ Վահան,
Ձեր Հեղինակ Սինեացն իշխան,



Աստղ ըղ մեօք Հայկին ցոլայ,
Ձեզ՝ շանթ պըսակ Մեհրուժանայ:
Ելէք ի մէնջ... եւայլն:
Ի բա՛ց, մի ձէնջ կարծեն օտարք.
Հայքս իբր զձեզ լցեմք վատթարք.
Ո՛չ, բողոքեա՜լ վեհիցն ի վայր
Թէ չէք դո՛ւք Հա՛յք, չէք մեր եղբայր.
Այլ յանդ մեր սուրբ՝ սերմն որոման
Գայլք ժանտք ի հօտ անդ Գրիգորեան:
Ելէք ի մէնջ... եւայլն:
Դուք ծա՜ղր ըզմեզ առնէք ի հետ...
Այլ մեք այնչափ հըզօր եմք դեռ,
Զի ա՛ռ ստանձնել բեռն ըղ վշտաց,
Զունիմք պէտ վա՜տ ձերոց բազկաց.
Այլ Հայկաբար ընդ գարս այսքան
Անջինջ տանիմք կնիք զԱզգութեան:
Ելէք ի մէնջ...եւայլն:
Ո՛հ, խիստ, այո՛, աղէտք են մեր
Դուք էք, ո՛վ ժանտք, Հայոց աւեր,
Ոտխք խանձեալք ի դառնութիւն,
Գազա՜ն, որ կայք յԱզգին արիւն,
Զաղէտք, զսոսխ տանիմք կրեմք.
Այլ ձեզ՝ ո՛չ, ձեզ ո՛չ հանդուրժեմք:
Ելէք ի մէնջ... եւայլն:
Զի ձեզ անմիտք, զի՞ զուր մրցիք,
Ո՞վ դուք եւ ո՞վ են Հայրենիք...
Դա յաղթական գարուց կաղնի,
Դուք չոր տերեւք հոսեան յերկրի.
Զայդ փոթորիկք շարժեցին ո՛չ.

Դուք զոյզն իսկդ կօծիք զողզոջ։
Ելէ՛ք ի մէնջ... եւայլն:
Ելէ՛ք, .... Մասեաց սուրբ հովանի,
Մի՛ զձեօք անկցի, չէ՛ք արժանի.
Մի զմեր առնուք արեւ, անձրեւ,
Հայոցս է դա յերկնից պարգեւ,
Ի սահմանաց սուրբ եդեմայ.
Ելէ՛ք առ հայր ձեր Սատանայ:
Ելէ՛ք ի մէնջ....եւայլն:
Ելէ՛ք, մի՛ զհարց մեր սուրբ զԱնուն
Առնուլ եւ մի՛ զայնր օրհնութիւն.
Թողէ՛ք զմայր զոր ծաղր առնուք,
Թողէ՛ք զաւերսն իւր եւ ըզ քուք.
Աւերք նորա են մեր պարծանք
Ամօթ մեր դո՜ւք էք, ո՛վ վիժանք։
Ելէ՛ք ի մէնջ.... եւայլն:
Անէծք ի գլուխդ, անէծք ի սիրտ,
Անէծք յԱզգիդ դէմ՝ հեղեալ քիրտ,
Անէծք ի գործ ձեր եւ ի բան,
Ցամօթ եւ ցաւ կեցջի՛ք ծըփան.
Եւ վաղազըրաք յերկիր օտար
Տապանքդ ի փուշ ծածկեսցին չար....
Այս է բաժի՛ն, այս են վերջայք,
Որոց չիցեն ճշմարիտ Հայք.
Այս է բաժի՛ն, ձեր, այս վերջայք,
Անէծք ոյց չէ՛ք ճշմարիտ Հայք.
Անէծք ոյց չեն ճշմարիտ Հայք։

Խ. Ադխ. Գուլֆայեան։



85.

ՍՈԽԱԿՆ ԱՒԱՐԱՅՐԻ։

4/4—Չափաւոր.




Թագէի վանուց ձենիկդ լինձ դիպաւ,
Սրտիկս որ ի խաչն էր կլիպ թունդ առաւ.
Ի խաչին թեւէն թռայ ու հասայ,
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ:
Բլբիւլ քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ բլբիւլ մեր Աւարայրին
Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
Որ զՎարդան ի Վարդ տեսնու կարմրիկ:
Զմեռն յանապատ կու գնա կայ ի լաց
ՅԱրտազ գայ գարուն ի թուփ վարդենեաց.
Երգել ու կանչել ձայնիւ Եղիշեայ,
Թէ պատասխանիկ մ՚ արդեօք Վարդան տա՞յ:

Հ. Գ. Վ. Ալիշանեան:

## 86·

### ՄԻՈՒԹԻՒՆ։

4/4—Չափաւոր·









Ի գլխակորիկ շուշանիկն ու վարդ,
Որ խսգապատ Հովիտն Ազինեան
Ո՛չ երգեաց ընաւ Թռչնիկ մի զուարթ
Քան սիրուն սոխակ ՍաՀմանադրուԹեան,
Որ խջաւ երգեց Հայոց սրտերուն,
Սէր եւ միուԹիւն:
Ի պաղուկ լերանց ձիւնապատ ծայրէն

Ձիջան առուակներ արծաթանման.
Ո՛չ վճիտ գետեր հեզիկ խոխոջեն,
Քան զուլալ նեկտար Սահմանադրութեան
Որ վազեց յորդեց Հայոց սրտերուն
Սէր եւ միութիւն:
Գարունն է եկել Հայութեան ի դաշտ
Ծլեր ու ծաղկեր Սէրն ու Միութիւն,
Ում Աստուած վերէն ժպտելով ի հաշտ,
Տուաւ պարգեւեց Սահմանադրութիւն:
Որ նա պիտի տայ Հայոց սրտերուն
Կեանք ու զօրութիւն:

Մ. Զ. Պէշկէթեան.

87.

ԴՈՒՑԱԶՆ ՏԱՃԱՏ.

4/4—Չափաւոր.









Դու լուսապսակ յերանաւէտն ի խորան
Զես ինչ կարօտ մեր մրտեննեաց կամ երգոց,
Բայց մենք, Տաճա՛տ, անուանդ առած մեզ Վահան,
Կուզենք քալել հետեւելով քու հետոց.
Դոյղն են մեր ծաղկունք
Բայց տես մեր արցունք..
Զաւակք են անտէր
Երկրին յորոյ սէր,

Արևնդ ես Թափեր
Դիւցազն անվեհեր...:
Ա՜հ... քու սուրդ Աւարայրի դաշտերէն
Կբարձրանայ եւ կկոչէ մեզ «Որդիք՝
Սէր ի սրտի զինեցէք... Ձեզ կսպասեն
Աստ Հայրենիք եւ անդր ի վեր Ձեր Նախնիք»:
Մեք այժ կերդնումք
Ի պերճ քո անուն
Քեզնի զուգընթաց
Զոհել Հայրենեաց
Տուր մեզ քաջալեր
Դիւցազն անվեհեր:

Թ. Թէրզեան:

88.

## ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ:

4/4—Չափաւոր:

Ո՛վ Հայ կա զո՛ւնք, ո՛վ դիւ ցա զունք ա -
հա՛ ձեզ նոր Հան դի սա րա՛ն: Բա ցէք
դա չերս հե րեք նըն ջէք տա րեք դա -
Մէջակ.
րե ր են ան ցա կան. Մենքպատ րաս տենք մենք



ուխ տել ենք, մերկեան քը զոհ քո լո րա նուէր
մատաղ ա նել Հա յոց ազ գին նորա լեզ ուին եւ
կը րո նին:

Առէք, սուսեր, նետ ու աղեղ,
Ելէք ընդդէմ Ձեր Թշնամեաց.
Ձեր Հաւատը եւ Ձեր ազգը,
Պաշտպանեցէք յօտար ազգաց:

Զօրականք:

Հայ զինուորի կեանքը դառն է,
Երբ նա պարապ տանն նստած է.
Մեզ ասպարէզ անմահ փառաց,
Կռուի դաշտն է նշանակած:

Վարդան:

Հայ զօրականք, Ձեր նետերը,
Կապարճից մէջ հերիք մնան.
Ձեր երկիրը Պարսից ոտից
Ընդէ՞ր լինին այսպէս կոխան:

Զօրականք:

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Մեր սուրբ երկրից հալածական,
Առնել անկրօն Պարսից ազգը.
Փրկչի խաչն է մեզ օգնական:

Վերջերգ։

Հայոց հովիւք, ձեր ոչխարները,
Էր սար ու ձոր Թափառական,
Գազանաց ճանկ ընկած ողբան.
Է՞ր չըլ լսէք նոցա կական:

Զօրականք։

Մենք պատրաստենք. մենք ուխտել ենք,
Աւետարան Խաչն ի ձեռին.
Առաջնորդել Հայոց զօրքին
Ի ժամ սրբոյ պատերազմին։

Յ. Կարինեան։

89.

ՄԱՂԹԱՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ։

4/4—Տանը.—Չափաւոր.









Ո՜վ Հայոց Աստուած,
Ջեռամբդ կերտուած,
Տուն Թորգոմայ փրկեցիր
Եւ միւս ազինք ձուլեցիր,
Որպէս աւետիս,
Ողջ երկրագնդիս,
Որ տոհմին Հայկայ,
Սիրոյդ առարկայ,
Տէր շտապիր մեզ օգնել:
Ո՜վ Հայոց Աստուած,
Լուսիցն զրկուած
Տիրասէր ծառայդ կրթիր,
Մտածութիւնքը փարատիր,
Որ ուսման գանձն
Գանձէ Հայ անձն,
Մասնակից լինենք.
Եւրոպային մենք.
Տէր շտապիր մեզ օգնել:
Ո՜վ Հայոց Աստուած,
Սաստէր, մեզ տուած
Բնատուր շնորհքներն յարգել,
Ցօղուտ ազգի մշակել,
Նատ ազգ կցանկար

Մեր ձիրքն ունենալ,
Բայց ապերախտ մենք.
Ապարդիւն թողնենք
Տէր շատապէ՛ր մեզ օգնել:
Ո՜հ, Հայոց Աստուած,
Հայք են միշտ զրկուած
Իրանց երկպառակութեամբ
Եւ անբարտաւանութեամբ,
Այս դատարկն
Միանգամայն ջնջէ՛ր,
Որ ամենայն վէճ.
Վերջանայ մեր մէջ,
Տէր շատապէ՛ր մեզ օգնել:

Մ. Փ.

## 90.

### ՉԵՆ ԵՐՋԱՆԻԿ.

2/4—Դաշնը.—Չափաւոր.









Թէ մտօք գրկես զերկիր եւ զերկին
Եւ ամեն գաղտնիք քեզ մերկանային,
Անհնար է քեզ ըլլալ երջանիկ
Այլ դժխեմ բաղդին թշուառ խաղալիք
Չեն չեն երջանիկ... եւայլն:
Ի զուր դիւցազունք պատերազմական
Դաշտերու վերայ կանգնեցին նշան.
Հազիւ ստացան յաղթութեան պսակ.
Կորզեց ձեռքերնին զայն մահու հրեշտակ.
Ո՛հ չէք երջանիկ, ո՛չ դժբաղդ Հայեր,
Մինչդեռ Հայքէնէ չէք մխիթարէր:

Մ. Պէշիկթաշլեան:

## 91·

### ՄԱՂԹԱՆՔ ԱՌԱՒՕՏԵԱՆ։

4/4 —Տանը.—Ձախաւոր.

Ո՛Հ, որ ը ղ լոյս բա րձ րեալըդ րես
յաջ եւ ղաղջ Աստ ուած ա կ նարկ սա նուց
յա ր կլս լՀա ռաչ. որ ընդա ղօթս
ընդ օդա սիլ բոյս ա ղու առոտս Վեհիդ ուղ-
ղեմք ո գի արդ Հը լու: Ո՛Հ, որըղ
ցայգ ե տուրՀա նել մեզ ի գլուխ ա ղատ
ղօ գիս կա լեալայ սոց չա րա բուղխԱստ ուած
Հը զօր դու ե ւ ըղ տիւս տուր մեզ գլխել յօր եւ
սե րկ ե Հաս յայս յարկ մեր խը մ բեր,



ըղ տիւսԱստ ուածզոր ըսկը սաք յանուն քո ա րա
քե ղումն խուրը վաստակս եւար գոյ ղեղս միտս մերշնոր
ՀացիՀուր եւ զՀօ գլսառ նել օր Հ նեալ քըր տանցար-
ժանար գա սխք:

## 92·

### ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ։

4/4—Զուարթուն.

Ո՛վ մե ծա սքանչ դու լե զու Ո՛Հ Հեշտ բար բառ
մայ րա կան փափ կա Հըն չիւն բա ռե րուդ
նը ման ար ղեօք ա յլտեղ կան Դու որնախ ինձ
Հըն չե ցեր, Նախ սի րոյ ո՜ Հ, Հեշտ խօս քեր

Այն նախըզ քեզ թօ թօ վեւ դեռ ի մ մըտ քէս

չէ ե լեր իմ մայրե նի քաղ ցըրլե զու

Կեաց ա ն սա սան կեաց յա ւէտ, Կեաց միշտ լեզու գ

Հայ կար ժան, Կաց ծաղ կա լի ց ծաղ կա ւէտ:

Ի՞նչ ղառն վիշտ է սրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու.
Բռնի իրեն զիս քաշէ
Սրտէս արիւն կը հեղու,
Ո՜հ, զայն օտարն ես սիրել
Բնաւ չեմ կարող ի սրտէ
Չէ՛ այն, չէ քաղցր իմ լեզու
Որ սիրով զիս կողջունէ:
Իմ մայր ՝ի քաղցր լեզու...եւայլն:
Լեզու համակ սիրաշարժ,
՝անի ճոխ ղ րճ ու պայծառ
Մինչ կը հնչես դուն քեզի.
Սրտերն ամեն գողացար,
Հնչէ՛, հնչէ՛ յաւիտեան
Վեհ գիւցազանց պերճ երգ. դու,
Թօթուէ փոշիդ խոր մռւթէն,
Նյ երեւան պերճ երգ. դու:
Իմ մայրենի քաղցր լեզու... եւլն:



Ցաւերժական սուրբ գրոց մէջ,
Կեաց միշտ նորէն ու նորէն,
Կշռեալ անուշ քո տողերդ
Թո՛ղ ամեն սիրտ արծարծեն.
Շնորհ ունիլ Արարչէն,
Կամք պէտք ըլլայ աղօթել,
Նրթունքս սրտէ բորբոքած
Կաղաղակէ անարգել:
Իմ մայրենի քաղցր...եւայլն:

## 93.

### ԳԱՐՈՒՆ.

4/4—Դիւանը.

Ո՞հ, ինչա նուշ ե ւ ինչպէս զով ա ռաւօ տուց

փը չե ս հո վիկ Ծաղ կանցվե րայ

գու ր գուրե լով Ե ւ մա զերու Ն

կու սինփափ կիկ, Բայց չեւհո վիկ

Իմ Հայրե նեաց Գը նայ ան ցի ր




Բայց չես Թռչնիկ· եւայլն:

Ո՛հ, ի՞նչ մրմունջ հանես վտակ
Ակամակիտ եւ հանդարտիկ,
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նայլին զիրենք վարդն ու աղջիկ,
Բայց չես վտակ իմ Հայրենեաց
Գնա՛, հոսէ սրտէս ի բաց:
Թէպէտ Թռչնիկ եւ հովն Հայոց
Աւերակաց Թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վտակ Հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են Հայրենեաց
Նոքա չերԹան սրտէս ի բաց:

Պ. Մ. Պէշիկթաշլեան։



94·

ՀԱՑ—ԴԻՒՑԱԶՈՒՆՔ.

2/4—Մնջոււն·




Պիտի միշտ պարծի Քանաքեռ աւան
Որ ծնաւ ձեզպէս կորիւն անման·

Դուք Արարատայ ամուր ախոյեան
Փառք եւ ցնծութիւն Սաքանազեան տան:
Ազրին պարծանք... եւայլն:
Մասիս՛ Արագած, Նպատ եւ Ցիպան
Սիրով տեղի տան ձեր սուրբ միութեան
Դուք նոցա գլխէն տեսէք Հայաստան
Ուր տեղ վտանգ կայ հասէք օգնութեան.
Ազրին պարծանք... եւայլն:
Մինչ մեր սեւ բախտէն գազան Հասան խան,
Ըրկէր խեղճ Հայոց վշտօք զանազան.
Դուք նորա դարձաք սարսափ յաւիտեան
Զօրս նորին վանեալ տարայք ցիր ու ցան.
Ազրին պարծանք....եւայլն.
Զի մոռնար Անին զայն ձեր յաղթութիւն,
Որ քրդաց, Պարսից արարիք նկուն.
Այնու հայ գերեաց հասաք յօգնութիւն,
Խումբ խումբ լուծեցիք դառնալ յիւրեան տուն:
Ազրին պաշտպանք...եւայլն:

Գ. Վ.

95.

МАՂԹАՆՔ.

$^4/_4$ — Չափաւոր.









Եցոյց աւասիկ զնոյն գաղտնի բացայայտեալ,
Եփրեմ իւր պատկեր ի սրբազան վենդ հաչակեալ
Արար զի սուրբ Դանիէլ վեհն կտակեցէ
Խորհրդարան նոր բարձրելոյն հաստատեսցէ,
Միաբան իսկ սուրբ Աթոռոյ զնոյն կրկնեսցէ
Եւ ազգն ողջոյն թախանձագին աղերսեսցէ:
Ի բիւր երանի հարսին լուսոյ մօր Սիօնի

Քանզի զհոգեւոր արքայդ ինքեան փեսայ ունի,
Զքուրձ տրտմութեան զարխութեան արդ մերկացի
Ափոփանաց եւ ցնծութեան զարդս զգեցի,
Փեսաւերօք, օրհորդօք զուարճացի,
Նորին եւ ձեր շնորհ օրհնութեան ի մեզ զեղցի:

Ս. Պապիկեան.

## 96.

ՀԱՌԱՉԱՆՔ.

4/4 — Չափաւոր.




Սա մեր անողորմ բաղդին հարուածներ
Քանի սրտառուչ հառաչանքներով
Ծմլեն հայ սրտերն. դող տան ու երեր:
Ո՛վ Տէր բաւ չէ՞ ին ինչ որ մինչեւ ցարդ
Ջրեցինք սուր, ցաւ, աւար ու աւար
Ո՞չ դու հաշտութեան ծխածան զուարթ:
Մեր սուրբ հայրենեաց երկինք պարզեցիր.
Եղեր գշնորհաց զԱրեւն հայրենի.
Կզրկես զմեզ Աստղէն հայրենի:



Մէկ սիրտ, մէկ ոգի, ամենքս մէկ անուն,
Մէկ յոյս, մէկ հաւատք կրօղ, մէկ արիւն,
Մէկ ապագայի եւ ակնկալու
Ինչո՞ւ չմիանանք ի մի յօդ սիրոյ:
Մի՛ զմեզ, Տէ՛ր, մի պատժեր անաչառ,
Կեցո՛ւր քո շանթերդ բարկութեան արդար,
Զիրեար սիրելու, օգնել իրարու
Կուխտեմք աւասիկ ուխտ սուրբ ի սրտէ,
Եւ խաղաղութեան թող գայ հրեշտակ
Միութիւն եւ սէր պահել ի սիրտ մեր:

Ս. Պ. Պ. Փափազեան.

## 97.

ՄԱՂԹԱՆՔ—ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ ՌՈՒՍԱՑ.

4/4—Մ՚եջակ.



## 98·

### ԱՂՕԹՔ ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆԵԱՑ:

4/4—Չափաւոր·




Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս,



Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան.
Ցարո՛ զնա Նոր յիւրն աւերս:

Տե՜ս, օտարք անգութ այպն ըզ մեօք առնեն
Եւ ըզ սրբութեամբք մեր թշնամանեն.
Բայց մեք ե՞րբ ի քոյդ հովացաք ի սէր.
Ո՛չ եւ ի մահու զքեզ պաշտեմք ի ստուեր:

Տէ՜ր, կեցո՛ զՀայաստան
Լո՛ւր զորդւոց առ քեզ աղերս,
Տէ՛ր, կեցո զՀայաստան,
Ցարո՛ զնա Նոր յիւրն աւերս:

Տէ՛ր, Տէ՛ր, դու զմերս օրհնեա՛ զուղղութիւն,
Որ ի Գրիգորի սրբեալս եմք արիւն.
Դու զնորուն պահեա՛ հաւատս անսասան.
Եւ զաթոռըն իւր սուրբ ի Հայս յաւիտեան:

Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս,
Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան.
Ցարո՛ զնա Նոր յիւրն աւերս:

Իբր զգարնան ի ցօղ ի սիրտ եղբարց
Ծաւալեա՛ ըզ սէր, հե՛զ հոգի մեր հարց
Եւ ի ջահ լուսոյ նոցա տար ըզ մեզ.
Իբրեւ զհօտ յարօտս քո ի Կադէս:

Տէ՛ր, կեցո՛ զՀայաստան,
Լո՛ւր զորդւոցն առ քեզ աղերս.
Տէ՛ր, կեցո՛ ըզ Հայաստան.
Ցարո՛ զնա Նոր յիւրն աւերս:

Ո՛հ, շատ իսկ աղէտք ծանրացան ի մեզ
Շատ իսկ մահ ի մեզ հաշուէ ողջակէզ···

Տէ՛ր կենաց, յերկնի մեր, անբաւ տապան,
Ա՛րկ ըզ շունչդ եւ կեանս առցէ Հայաստան:

Խորէն Վ. Գալֆայեան:

## 99.

### ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑԻՆ.

4/4—Չափաւոր.






Ո՛վ Տէր մեր, Տէր փութա
Զազգ մեր համայն փրկեա
Ի թշնամեաց:
Կափո՛ զաչս նոցուն
Հատ զարմատոյն զբուն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա հզօր.
Ի քո լինեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեա.
Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածազգեաց
Շնորհեա պետին մեր հարց
Որ զմեզ հովուէ:
Աջովդ համատարած
Զազգ մեր արտահալած
Փոյթ գումարեա
Ցաշխարհ Արարատեան
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեպհական.
Օտար ազգաց:
Առաքեա ի բարձանց
Զհամակցութիւն կամաց
Ի մերազնեայս:
Զոմն ի մէնջ յարո
Հովիւ ազգի մերոյ
Տո՛ւր նմա ցաւս հաւժկու,
Հովուել ըզ մեզ:

Մ. Դ. Թոսչեանեանց:

## 100.

### ԱՂՔԱՏ ԿԻՆ։

2/4 — Չափաւոր.

Ցուրտը փչեց ձմեռը սաստիկ, ձիւնը
ծածկեց գետի նը, ամե նայնմարդ մըտաւ իւ ր
տունպատս պարուիլ ցըրտի ցը :

Ժամի դռնում դողդողալով
Կանգնած էր մի աղքատ կին,
Նորա հանդերձ պատառ, պատառ,
Ձունի շապիկ իւր հագին:
Անհամարձակ նա իւր ձեռքը
Պարզումէ անցկացողին,
«Ողորմութիւն, արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:
Ձեզ սիրելիք, ասեմ ով էր,
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը ոտաբոբիկ
Կանգնած ժամի դռնումը:
Շատ ժամանակ դեռ չէ անցել
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում
Իւր սեպհական կառքերով:
Այժմ վախով նա իւր ձեռքը



Պարզումէ անցկացողին—
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին:»

Մ. Նալբանդեան:

## 101.

### ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ.

4/4 — Միջակ.

Քուն ե ղի՛ր պա լաս, աչ քըդ խուփ ա րա,
Նաշ խուն ա չե րուդ. Թող քուն վը րայ
գայ օրօր օր օրօր օր պա լա ս օրօր օր օրօր
Նա նի իմ Սու րե նի կի ս քու նը կը -
տա նի:

Օսկի խաչ վզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապել է ծարէն տէր պապան,
Օրօր օր եւայլն:
Մալի հիլուններ կախել եմ ես ալ,
Նազար չես առնուլ, քուն եղիր, մի լալ.
Օրօր օր... եւայլն:

Աս քանի՞ մորդ անքուն աչքովը
Անցել է օրեր օրոցքիդ քովը.
Օրօր օր...եւայլն:
Օրոցքդ օրեմ, օրով բոյ քաշես
Մղկըտան ձայնով սիրտս չի մաշես.
Օրօր օր...եւայլն:
Դուն ալ քուն եղի՛ր, ինձի ալ քուն տուր,
Սուրբ Աստուածամայր Սուրէնիս քուն տուր,
Օրօր օր օր օր օր օր պալաս
Օրօրօր օր օր օր նանի
Իմ Սուրէնիկիս քունը կու տանի:

Ռ. Տ—Գ. Պաթճանեան:

## 102.

### ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ.

4/4—Չափաւոր.






Չկայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Չի՛ք ամուսին որով ցաւերս մեղմանայ:
Օտար երկին, արեւ, աստղեր եւ լուսին
Թէեւ պայծառ ինձի խաւար կը թուին:
Բնակարանս՝ տխուր պանդոկ օտարաց
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:
Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն:
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս.
Նա օտար չէ, նա իմն է, սիրէ զիս:

## 103.

### ՀԱՅՐԵՆՆԵԱՑ ՁԱՅՆ.

4/4—Չափաւոր:—



ա ըւնսր բէ ի մ տաճար ներսէր կը կանգ նէ

իմ նա խա տինքս ա ըւնսըր բէ:

Ո՛հ այսքա նի տա րի ան ցաւ ուխ տեցէք ինձ սէր

յոյսեւ կեանք ա մուլմըր ցում հեռ վիշտեւ ցաւ

այս է իմբա ժինայս էձեր ջանք:

Հընոց՝ ո՛վ դուք, որ օտարին,
Փառաց պատւոյ էք խնկարկու,
Անմահութեան դրոշմ ազգին,
Նախնեաց քրտինք ծախած շըփայ
Իմ տաճարներս դուք չէք կանգներ
Իմ նախատինքս դուք չէք սրբեր:
Կանգնին այսպէս անթիւ օրեր
Եւ յաւէրակս նստած յերեր
Իբրեւ այրի հըրոյ մատնած
Կոյս ոյր օժիտն է անարգուած.
Գոչեմ տաճարներս ո՛վ կը կանգնէ.
Իմ նախատինքս ո՛վ կը սրբէ։

. . .



104.

ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ։

4/4—Մէջաւ.

Ո՛ն, փութա ցէք հա սեալ է ժա մ.

Հարէ՛ք մարտի ն փո ղերն ուժգին, Մեղա -

Հար կու կայ պատե րա զմ, արեամբ զի

նեալ է թշնա մին, արեամբ զի նեալ է

թշնա մինիըշ ըեմքա զատ, բա նամքդւ-

ներ չար նա խան ձու մեր ոխե րիմ, որ դա րե -

րով է մեզփա կեր ի գե րու թեան ի բանտ մըթինի

զէ ն օ՛նփու թացէ՛ք: Տրալա լալամ գունդ ի

գունդհայ կազմնք, տրալա լալամ լու սոյն

այս նոր դա րե րոյս վա նենք բըռ -

նուլթեան դաւ ունենգ:

Մեր մարք՝ մեր քորք խոցեցան շատ
Շղթայակապ ի գերուլթեան,
Մինչ մեր հարք՝ եղբարք ազատ
Անփոյթ էին կոյր զկուրայն:
Անդեւ լուսով ուսման
Տեսան վերքերն իրենց ազգաց·
Ուստի լինին մեզ օգնական
Առնել նախանձ արտահալած:
Ի զէն օ՛ն փութացէք…եւայլն:

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ

Երես.


1· Ազնիւ ընկեր մեռանումեմ . . . . 1
2· Անի քաղաք նստեր կուլար . . . . 3
3· Արի՛ք Հայկազունք յառաջ . . . . 4
4· Արկածք Հայոց ժամանակին . . . . 6
5· Անհնալիշ անձայն խորհուրդ . . . . 8
6· Ահա՛ սուրհանդակի սայլակը . . . . 9
7· Ահա՛ բաժակ ուրախութեան . . . . 10
8· Ահա հրեշտակ ոսկեփեաուր . . . . 12
9· Արի՛ք որ երթամք . . . . 15
10· Ահա մեզ փառք . . . . 16
11· Արիացիր գոնեա՛ մայր մեր . . . . 17
12· Ազատն Աստուած . . . . 18
13· Ափսոս քեզ Հայոց . . . . 20
14· Առ ընկալ ի գիրկդ . . . . 21
15· Ա՛յ մարդ այսօր . . . . 22
16· Արիք ընկերք քաջ . . . . 24
17· Ահա աղաւնին . . . . 25
18· Բարէ՜ քանի հրաշափառ . . . . 28
19· Բամբ… որոտան . . . . 30
20· Գիւղական աղջիկ եմ . . . . 31
21· Գարունն եկաւ ծաղկ· . . . . 33
22· Գիշեր ցերեկ կհառաչեմ . . . . 35
23· Գեղեցիկ Արմենուհի . . . . 36
24· Գարունն է եկել նաշ . . . . 37
25· Գարուն Հայաստան . . . . 38
26· Երբ որ բացուին դռներն . . . . 40
27· Ելէք, ելէք, օն դուք . . . . 41
28· Ես եմ որբիկ . . . . 42

| | | |
|---|---|---|
| 29· | Ես եմ քաջ զինուոր | 43 |
| 30· | Եկաւ ժամանակ | 44 |
| 31· | Զինուորիս երգերը | 46 |
| 32· | Զէյթուն անկախ | 47 |
| 33· | Զարթի՛ր մանուկ իմ | 48 |
| 34· | Ե՞ր հեռանաս քո մայրենի | 49 |
| 35· | Թէ իմն Հայրենեաց | 51 |
| 36· | Թէթև ունէի, ո՛հ | 52 |
| 37· | Թէ իմ ալևոր հերքս | 53 |
| 38· | Իմ սիրելի զաւակունքս | 55 |
| 39· | Ի զո՛ւր են ի զուր· | 57 |
| 40· | Ինձ համար չէ գարնան | 58 |
| 41· | Իմ հայրենիք զիս կկանչէ | 59 |
| 42· | Ի բիւր ձայնից բնութեան | 61 |
| 43· | Լըսի՛ր մանուկ Հայաստան | 63 |
| 44· | Ծիծեռնակ | 64 |
| 45· | Ծաղիկ ունիմ նարնջի | 66 |
| 46· | Հայրիկ, ասաց դուստր | 67 |
| 47· | Հայրենիք սրբազան | 69 |
| 48· | Հապա քաջազունք | 70 |
| 49· | Հայաստան քաղցր իմ | 71 |
| 50· | Հերիք որդեակք | 73 |
| 51· | Հնչեսցեն լարք գեղգեղ | 74 |
| 52· | Հիմի՞ էլ լռենք եղբարք | 76 |
| 53· | Հիմի՞ էլ խօսենք եղբարք | 79 |
| 54· | Հեռացել եմ իմ մայրենի | 81 |
| 55· | Հրեշտակ զուարթուն | 83 |
| 56· | Հայաստան երկիր | 83 |
| 57· | Հայրենասէր Արամեանք | 85 |
| 58· | Հայ մեռնինք, ո՛չ եղբարք | 87 |
| 59· | Հայրենեաց սիրով վառուած | 92 |
| 60· | Հուր բարկութեան | 94 |
| 61· | Հայրենիք մեր շքեղ | 96 |





| | | |
|---|---|---|
| 62· | Ձայն տուր ո՛վ ծովակ | 97 |
| 63· | Մայր արաքսի ափերով | 99 |
| 64· | Մեր Հայրենիք թշուառ | 101 |
| 65· | Մեծափառ արքայն մեր | 102 |
| 66· | Մտաւ արեւս երջանկութեան | 103 |
| 67· | Մեզնից շատ առաջ | 106 |
| 68· | Մայրենի լեզու, մայրենի | 108 |
| 69· | Մինչդեռ յուսով խայտայ | 110 |
| 70· | Մեր քաջ Հայոց զօրութիւն | 111 |
| 71· | Մեզ Նոր արեւ ծագէ | 112 |
| 72· | Ցամսավերջն Ապրելի | 114 |
| 73· | Ցառաւօտ կենաց կուսանիս | 115 |
| 74· | Ննջեա՛ Վարդան անուշ քնով | 117 |
| 75· | Ողջոյն տուէք իմ Հայրենեաց | 118 |
| 76· | Ողջոյն ընդ քեզ Հայաստան | 119 |
| 77· | Ո՛վ Տէր Աստուած | 121 |
| 78· | Ո՞հ, զի չքնաղ զգացմանց ի վառ | 123 |
| 79· | Որդիք հայկայ որդիք փառաց | 125 |
| 80· | Ո՞րն է աշխարհ Հայաստան | 126 |
| 81· | Ո՛վ Տէր Աստուած լեր մեզ | 128 |
| 82· | Ո՛վ դու հայ-աշխարհ | 128 |
| 83· | Որդիք հայկայ որդիք փառաց | 131 |
| 84· | Ո՛չ, ձեզ, ո՛չ չիք յաջողուած | 133 |
| 85· | Ո՛վ դու բարեկամ այրած | 137 |
| 86· | Ո՛չ զուարթ գարուն | 138 |
| 87· | Որոտնդոստ թէ շառաչիւն | 140 |
| 88· | Ո՛վ Հայկազունք ով դիւցազունք | 142 |
| 89· | Ո՛վ Հայոց Աստուած | 144 |
| 90· | Որ մահկանացուն | 145 |
| 91· | Ո՜հ, որ ԳԼԽս բարձրեալ | 148 |
| 92· | Ո՛վ մեծասքանչ դու լեզու | 149 |
| 93· | Ո՜հ, ինչ անուշ և ինչպէս | 151 |
| 94· | Ով որ ծանօթ է պատմ | 153 |

95· Սահման անսահման . . . . . . 154
96· Սա տխուր վիճակ . . . . . . 156
97· Տէր պահեա զկայսր . . . . . . 157
98· Տէր կեցո՛ զՀայաստան . . . . . 158
99· Տէր կեցո՛ զՀայս . . . . . . 160
100· Ցուրտը փչեց ձմեռը . . . . . . 162
101· Քու՛ն եղի՛ր պալաս . . . . . . 163
102· Օտար երկիր, օտար պանդուխտ . . . . 164
103· Օտար ափունք ցրուած ի սփիւռս . . . . 165
104· Օ՛ն փութացէք հասեալ է ժամ . . . . 167

## Մեր աշխատութիւնները·

1· Մանկական երգարան . . . . 20 կոպ·
2· Մանկական ձայնագրեալ երգարան · . 40 կոպ·
3· Դասագիրք Հայկական ձայնագրութեան · 30 կոպ·

Պատրաստւում են տպագրութեան համար:

4· Դասագիրք ձայնագրութեան արեւելեան եղանակների համար
5· Խմբական քառաձայն երգարան:

28759

ՀՀ Ազգային գրադարան
NL0467443